

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի
հունիսի 15-ի թիվ 33 որոշմամբ

**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ՄՄ ՏԿ 026/2012

Փոքրաչափս նավերի անվտանգության մասին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Հոդված 1.	Տարածման ոլորտը.....	3
Հոդված 2.	Սահմանումները.....	5
Հոդված 3.	Շուկայում շրջանառության եվ շահագործման հանձնելու կանոնները.....	9
Հոդված 4.	Փոքրաչափ նավերի, փրկարար միջոցների եվ փոքրաչափ նավերի համար սարքավորումների անվտանգությանը ներկայացվող պահանջներ.....	11
Հոդված 5.	Փոքրաչափ նավերին ներկայացվող պահանջները դրանց շահագործման եվ օգտահանման ընթացքում.....	22
Հոդված 6.	Կանոնակարգման օբյեկտների նույնականացումը.....	33
Հոդված 7.	Համապատասխանության գնահատումը.....	34
Հոդված 8.	Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանով մակնշումը.....	38
Հոդված 9.	Պաշտպանության մասով վերապահում.....	38
Հավելված թիվ 1	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	41
Հավելված թիվ 2	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	42
Հավելված թիվ 3	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	50
Հավելված թիվ 4	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	52
Հավելված թիվ 5	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	54
Հավելված թիվ 6	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	57
Հավելված թիվ 7	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	61
Հավելված թիվ 8	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	66
Հավելված թիվ 9	«Փոքրաչափ նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի.....	68

ՆԱԽԱԲԱՆ

1. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում փոքրաչափ նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) փոքրաչափ նավերի համար սարքավորումների նկատմամբ կիրառման ու կատարման համար պարտադիր այնպիսի միասնական պահանջներ սահմանելու նպատակով, որոնք Մաքսային միության միասնական մաքսային տարածքում ապահովում են շրջանառության մեջ բաց թողնվող փոքրաչափ նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) փոքրաչափ նավերի համար սարքավորումների ազատ տեղաշարժը:

3. Եթե փոքրաչափ նավերի նկատմամբ ընդունվեն Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր, որոնք փոքրաչափ նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) փոքրաչափ նավերի համար սարքավորումների նկատմամբ սահմանում են՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներից տարբերվող, սակայն դրանց չհակասող պահանջներ, ապա փոքրաչափ նավերը, փրկարար միջոցները եւ (կամ) փոքրաչափ նավերի համար սարքավորումները պետք է համապատասխանեն Մաքսային միության այդ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

ՀՈԴՎԱԾ 1. ՏԱՐԱԾՄԱՆ ՈԼՈՐՏԸ

4. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է Մաքսային միության անդամ պետությունների միասնական մաքսային

տարածքում շրջանառության մեջ բաց թողնվող փոքրաչափ նավերի, փրկարարական միջոցների եւ (կամ) փոքրաչափ նավերի համար սարքավորումների վրա, ինչպես նաեւ դրանց ներկայացվող պահանջների հետ կապված նախագծման, շինարարության, շահագործման (ներառյալ շահագործումից հանելն ու վերանորոգումը), վերացման եւ օգտահանման գործընթացների վրա:

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են փոքրաչափ նավերի, փրկարարական միջոցների եւ (կամ) փոքրաչափ նավերի համար սարքավորումների վրա՝ ըստ 1-ին հավելվածով սահմանված ցանկի:

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը սահմանում է պահանջներ փոքրաչափ նավերի, փրկարարական միջոցների եւ (կամ) փոքրաչափ նավերի համար սարքավորումների նկատմամբ՝ մարդու կյանքի եւ (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի եւ (կամ) առողջության պաշտպանության, ինչպես նաեւ սպառողներին (օգտագործողներին) մոլորության մեջ գցող գործողությունների կանխման նպատակներով:

5. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում հետեւյալի վրա՝

ա) փրկարար եւ հերթապահ մակույկներ ծովային եւ գետային նավերի համար

բ) սպորտային նավեր, որոնք նախատեսված են բացառապես մրցարշավների համար՝ ներառյալ թիավար մրցանավերն ու ուսումնական (մարզական) նավերը, որոնք այդպիսին են հայտարարվել արտադրողի կողմից,

գ) առագաստի տակ տեղակայված հարթակներ ալիքասահքի (սերֆինգի) համար, փչովի բալոններ եւ ջրային այլ ատրակցիոններ.

դ) շարժիչով սարքվածքներ ալիքասահքի համար եւ համանման այլ՝

շարժիչով սարքվածքներ.

- ե) փորձարարական փոքրաչափի նավեր.
- զ) նավեր օդաբարձիկի եւ ստորջրյա թելերի վրա.
- է) զբոսանքային սուզանավեր.
- ը) փոքրաչափի նավեր՝ մինչեւ 100 կգ ներառյալ զանգվածով»

6. Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ բաց թողնվող փոքրաչափի նավերը, փոքրաչափի նավերի համար սարքավորումները, փրկարար միջոցները պետք է համապատասխանեն Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին:

ՀՈԴՎԱԾ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

7. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետեւյալ եզրույթները եւ դրանց սահմանումները՝

փոքրաչափի նավի (փոքրաչափի նավի տեխնիկական միջոցի) հարատեւություն՝ փոքրաչափի նավի (փոքրաչափի նավի տեխնիկական միջոցի) ունակությունը դիմակայելու վթարի հետեւանքով ստացված վնասվածքներին՝ հնարավորինս պահպանելով իր լողունակությունը, շահագործման ու ծովագնացական որակները (շահագործման հատկությունները) այնպիսի իրադրություններում, երբ վտանգված է փոքրաչափի նավի անվտանգությունը, եւ ապահովելու նավի վրա գտնվող մարդկանց անվտանգությունն ու բեռի պահպանվածությունը.

փոքրաչափի նավի (փոքրաչափի նավի տեխնիկական միջոցի) կենսական պարբերաշրջան՝ փոքրաչափի նավի (փոքրաչափի նավի տեխնիկական միջոցի) վիճակի հաջորդական փոփոխությունների փոխկապակցված գործընթացների ամբողջություն՝ սկսած դրան ներկայացվող նախնական պահանջների ձեւակերպումից մինչեւ դրա շահագործման (ուտիլիզացման) ավարտը.

դասակարգում՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման ձեւ, ինչն իրականացվում է փոքրաչափ նավերի դասակարգման մարմնի կողմից.

փոքրաչափ նավ՝ նավ, որի երկարությունը ոչ ավելի, քան 20 մետր է, եւ դրա վրա մարդկանց գտնվելու թույլատրելի թիվը ոչ ավելի, քան 12 մարդ է՝ բացի այն նավերից, որոնք պատրաստված կամ սարքավորված են ձկնորսության, բեռների, ուղեւորների փոխադրման, քարշակման, օգտակար հանածոների որոնում, հետախուզում եւ արդյունահանում իրականացնելու, շինարարական, ճանապարհային, ջրատեխնիկական եւ համանման այլ աշխատանքների, նավատարային եւ սառցահատման անցկացման համար, ինչպես նաեւ ջրային օբյեկտներն աղտոտվածությունից եւ աղտոտվածությունից պաշտպանելու ուղղությամբ միջոցառումների անցկացման համար.

մեքենայական սրահներ՝ սրահներ, որոնցում տեղադրված են փոքրաչափ նավի էներգետիկական կայանքների տեխնիկական միջոցները, սարքավորումները.

փոքրաչափ նավերի համար սարքավորումներ՝ տեխնիկական սարքվածք, որը տեղադրվում է փոքրաչափ նավերի վրա եւ անհրաժեշտ է նավի հիմնական եւ (կամ) լրացուցիչ գործառնություններն իրականացնելու համար.

փոքրաչափ նավերի դասակարգման մարմին (մարմիններ)՝ Մաքսային միության անդամ պետության փոքրաչափ նավերի դասակարգում իրականացնող մարմնի լիազորություններ իրականացնող կազմակերպություն (կազմակերպություններ).

կայունություն՝ արտաքին ազդեցությամբ հավասարակշռության վիճակից դուրս բերված փոքրաչափ նավի՝ այդ ազդեցությունը դադարելուց հետո հավասարակշռության վիճակի վերադառնալու ունակությունը.

նախագծող՝ փոքրաչափ նավի վերաբերյալ նախագծակոնստրուկտորական փաստաթղթերը մշակող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

ջրային ավազանի տարակարգ՝ ջրային ավազանների կատեգորիա՝ կախված դրանց հողմալիքային բնութագրերից.

սերիական թողարկման փոքրաչափ նավեր՝ արդյունաբերական կառուցման փոքրաչափ նավեր, որոնց՝ միեւնույն տեսակից տարեկան թողարկման ծավալը կազմում է ոչ պակաս, քան 10 միավոր.

սպորտային նավեր՝ նավեր, որոնք նախագծված, կառուցված կամ վերասարքավորված են առավելապես կամ բացառապես սպորտով զբաղվելու, մրցումների, մարզումների, հեռավոր սպորտային նավարկության, ջրային տեխնիկական սպորտի այլ տեսակներով զբաղվելու համար:

նավ օդաբարձիկի վրա՝ նավ, որի ամբողջ զանգվածը կամ դրա զգալի մասը ընթացքի մեջ գտնվելիս կամ կանգնած վիճակում պահպանվում է ջրի (գետնի, սառույցի եւ այլնի) վրա՝ օդաբարձիկ կոչվող խոռոչում հատակի տակ անընդհատ մղվող օդի հավելուրդային ճնշման ուժերի օգնությամբ.

նավ ստորջրյա թելերի վրա՝ նավ, որի իրանը ընթացքի ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ պահպանվում է ջրի վրա՝ ջրի մեջ սուզված թելերի վրա առաջացող հիդրոդինամիկական ուժերի օգնությամբ.

սերտիֆիկացման փորձարկումներ՝ փոքրաչափ նավի, փոքրաչափ նավերի վրա տեղադրվող սարքավորումների ներկայացուցչական նմուշի (նմուշների) փորձարկումներ, որոնց արդյունքների հիման վրա եզրակացություն է արվում Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին փոքրաչափ նավի տեսակի կամ փոքրաչափ նավի վրա տեղադրվող սարքավորման տեսակի համապատասխանության մասին.

շահագործման մասնագրային (նախագծման ընթացքում նախատեսված) պայմաններ՝ ծովի եւ քամու այն վիճակը, որի դեպքում հնարավոր է փոքրաչափ նավի անվտանգ շահագործումը.

փոքրաչափ նավերի շինարար՝ այնպիսի իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իր տրամադրության տակ ունի հատուկ

սարքավորումներ, հանդերձանք եւ հատուկ պատրաստված անձնակազմ, որն իրականացնում է փոքրաչափ նավերի կառուցում, արդիականացում, թարմացում կամ վերանորոգում, պաշտոնապես իրեն պատասխանատու է ճանաչում կառուցված, արդիականացված, թարմացված կամ վերանորոգված փոքրաչափ նավի համար, եթե շահագործման ընթացքում չեն խախտվել մշակված նախագծով կամ փոքրաչափ նավի անվտանգ շահագործումը կանոնակարգող այլ փաստաթղթերով նախատեսված սահմանափակումները:

փոքրաչափ նավի տեսակ՝ փոքրաչափ նավ, որն ունի տեխնիկական նկարագրում ամրագրված կոնստրուկտորական ընդհանուր հատկանիշներ, կառուցված է մեկ շինարարի կողմից:

փոքրաչափ նավերի տեխնիկական շահագործում՝ փոքրաչափ նավերն իրենց շահագործման ամբողջ ժամանակահատվածում սարքին վիճակում պահելու համար իրականացվող կազմակերպչական եւ տեխնիկական միջոցառումների համալիր:

փոքրաչափ նավերի տեխնիկական միջոցներ՝ շարժիչներ, գեներատորներ, պոմպեր, կոմպրեսորներ, կաթսաներ, ջերմափոխանակման ապարատներ, ճնշման տակ գտնվող անոթներ, զտիչներ, համակարգերի ամրան, տախտակամածային մեխանիզմներ, էլեկտրական սարքավորումներ, կապի եւ նավագնացության ռադիոէլեկտրոնային միջոցներ, հեղուկացված գազի կենցաղային սարքավորումներ, էկոլոգիական անվտանգության սարքավորումներ եւ նավաշինության, էլեկտրատեխնիկական ու ռադիոէլեկտրոնային արդյունաբերության այլ արտադրատեսակներ, որոնք նախատեսված են փոքրաչափ նավի շահագործման, փոքրաչափ նավի եւ դրա սարքավորումների կառավարման հնարավորությունն ապահովելու հետ կապված որոշակի գործառույթներ իրականացնելու համար:

փոքրաչափ նավերի տեխնիկական սպասարկում՝ գործողությունների համալիր կամ գործողություն փոքրաչափ նավի, փոքրաչափ նավի տեխնիկական միջոցի, այլ տեխնիկական օբյեկտի՝ նպատակային

նշանակությամբ օգտագործման, սպասման, պահպանման եւ փոխադրման ժամանակ աշխատունակությունը կամ սարքինությունն ապահովելու համար.

Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմին՝ Մաքսային միության անդամ պետության ազգային մարմին՝ օժտված փոքրաչափս նավերի դասակարգում եւ տեխնիկական դիտարկում իրականացնելու լիազորություններով.

շահագործող՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իրականացնում է փոքրաչափս նավերի շահագործում եւ պատասխանատվություն է կրում՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխան իր վրա դրվող պարտավորությունները կատարելու համար.

շահագործման փաստաթղթեր՝ փոքրաչափս նավերի նախագծողի, արտադրողի կամ շահագործողի կողմից մշակված փաստաթղթերի ամբողջություն՝ այդ նավերի նպատակային նշանակությամբ անվտանգ օգտագործումը եւ դրանց անվտանգ օգտահանումն ապահովելու նպատակներով.

շահագործում՝ փոքրաչափս նավի կենսական պարբերաշրջանի փուլ, որն իր մեջ ներառում է փոքրաչափս նավի շահագործման ընդունումը, արտադրողի (նախագծողի) կողմից սահմանված նպատակային նշանակությամբ դրա օգտագործումը, տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումն առանց շահագործումից հանելու եւ դրա շահագործումից հանումը.

փորձարարական փոքրաչափս նավեր՝ փոքրաչափս նավեր, որոնք օգտագործվում են փորձարարական-կոնստրուկտորական, փորձարարական, գիտահետազոտական աշխատանքների անցկացման, ինչպես նաեւ փոքրաչափս նավերի եւ այլ տեխնիկայի փորձարկման համար:

ՀՈԴՎԱԾ 3. ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

8. Փոքրաչափս նավերը, փրկարար միջոցները եւ (կամ) փոքրաչափս

նավերի համար սարքավորումները թույլատրվում են շուկայում շրջանառության մեջ դնել Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին դրանց համապատասխանության դեպքում, ինչը հաստատվում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով դրանց մակնշմամբ՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 8-րդ հոդվածին համապատասխան:

Փոքրաչափս նավը շահագործման հանձնելու ամսաթիվ է համարվում դրա պետական գրանցման ամսաթիվը:

Այն փոքրաչափս նավերը, փրկարար միջոցները եւ (կամ) փոքրաչափս նավերի համար սարքավորումները, որոնց համապատասխանությունը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հաստատված չէ, չպետք է մակնշվեն Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով, եւ շուկայում շրջանառության մեջ դրանց բացթողումը չի թույլատրվում:

Շրջանառության մեջ բաց թողնելու դեպքում Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթեր են հանդիսանում՝

փոքրաչափս նավերի համար, որոնց համապատասխանության գնահատումը (հաստատումը) անցկացվում էր դասակարգման ձեռով՝ փոքրաչափս նավի դասակարգման վկայականը.

փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) փոքրաչափս նավերի համար սարքավորումների համար, որոնց համապատասխանության գնահատումը (հաստատումը) անցկացվում էր սերտիֆիկացման ձեռով՝ համապատասխանության սերտիֆիկատը:

ՀՈԴՎԱԾ 4. ՓՈՔՐԱԶԱՓՍ ՆԱՎԵՐԻ, ՓՐԿԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՓՈՔՐԱԶԱՓՍ ՆԱՎԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

9. Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ բաց թողնված փոքրաչափ նավերի տեխնիկական բնութագրերը պետք է համապատասխանեն հայտարարված տեխնիկական բնութագրերին եւ ցուցանիշներին, որոնք ներկայացված են փոքրաչափ նավի շինարարի ուղեկցող տեխնիկական փաստաթղթերում:

Փոքրաչափ նավերի անվտանգության ցուցանիշները չպետք է նվազեն բնական շահագործման պայմաններով թույլատրվող կլիմայական եւ մեխանիկական արտաքին գործոնների ազդեցության ներքո:

10. Յուրաքանչյուր փոքրաչափ նավի վրա փոքրաչափ նավի շինարարի կողմից պետք է սահմանված եւ փակցված լինի մակնշման ցուցանակ, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա) փոքրաչափ նավի շինարարական կազմակերպության կամ արտադրողի անվանումը, գտնվելու վայրը (ներառյալ իրավաբանական հասցեն եւ երկիրը) եւ ֆիրմային նշանը.

բ) նույնականացման համարը՝ ըստ փոքրաչափ նավի շինարարի հաշվառման համակարգի.

գ) փոքրաչափ նավի կառուցման ամսաթիվը.

դ) փոքրաչափ նավի տեսակը.

ե) նախագծի (առկայության դեպքում) համարը (նշումը).

զ) առավելագույն բեռնունակությունը կամ նավի վրա գտնվելու անձանց թիվը.

է) շարժիչի առավելագույն հզորությունը (փոքրաչափ ինքնագնաց նավերի համար).

ը) շարժման առավելագույն արագությունը (փոքրաչափս ինքնագնաց նավերի համար)։

թ) ծառայության ժամկետը (սահմանված լինելու դեպքում)։

11. Փոքրաչափս նավերի անվտանգությանը ներկայացվող պահանջները սահմանվում են՝ կախված նավարկության շրջանի բարդության կատեգորիայից, որի սահմաններում նախատեսվում է դրանց շահագործումը։ Ջրային ավազանների ցանկերը՝ կախված նավարկության շրջանների տարակարգերից, սահմանվում են Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի կողմից։

3-րդ հավելվածով փոքրաչափս նավերի նկատմամբ՝ ըստ նավարկության շրջանների սահմանվում են սահմանափակումներ։

Փոքրաչափս նավերի նախագծողները եւ շինարարները պետք է հաշվի առնեն փոքրաչափս նավերի ենթադրյալ շահագործման շրջաններում հիդրոոդերեութաբանական պայմանները։

12. Փոքրաչափս նավերի իրանները եւ դրանց կառուցվածքային տարրերը պետք է օժտված լինեն այնպիսի դիմացկունությամբ եւ կայունությամբ, որոնք թույլ կտան դիմանալ այնպիսի բեռնվածությանը, որին դրանք ենթարկվում են շահագործման հատկորոշված (նախագծման ընթացքում նախատեսված) պայմաններում։

13. Փոքրաչափս նավերի իրանների պատրաստման համար կիրառվող նյութերի, դրանց տեխնիկական միջոցների դետալների եւ հանգույցների երկարակեցությունը պետք է համապատասխանի դրանց ծառայության ժամկետին։

14. Փոքրաչափս նավի իրանի կառուցվածքը, չափսերը եւ դրա տարրերի փոխդասավորությունը պետք է ապահովեն՝

ա) ամրությունն ու անջրանցիկությունը։

բ) փոքրաչափս նավի կայունությունը՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան.

գ) իրանային կառուցվածքների տեխնիկական շահագործման հուսալիությունն ու ավտանգությունը.

դ) նավային տեխնիկական միջոցների դասավորությունն ու տեղադրվածությունը, ինչն ապահովում է դրանց անվտանգ շահագործումն ու սպասարկումը.

ե) շահագործման ժամանակ շրջակա միջավայրի աղտոտումը կանխելը եւ վթարների ժամանակ շրջակա միջավայրի աղտոտման նվազարկումը:

15. Փոքրաչափս նավերը պետք է լինեն կայուն եւ անջրասուզելի փոքրաչափս նավերի վրա նախագծերով նախատեսված՝ դրանց շահագործման հատկորոշված պայմաններին համապատասխանող բեռնվածության դեպքում:

Մարդկանց մշտապես եւ ժամանակավորապես գտնվելու բոլոր վայրերում, ինչպես նաեւ մարդկանց անցման վայրերում պետք է միջոցներ նախատեսվեն սայթաքելը, բարձրությունից եւ նավից դուրս ընկնելը կանխելու ուղղությամբ:

16. Փոքրաչափս նավի իրանն ու վերնակառույցները պետք է օժտված լինեն այնպիսի դիմացկունությամբ եւ կայունությամբ, որոնք թույլ կտան դիմանալ այնպիսի բեռնվածությանը, որոնց փոքրաչափս նավերը ենթարկվում են շահագործման հատկորոշված (նախագծման ժամանակ նախատեսված) պայմաններում՝ փոքրաչափս նավի վրա գտնվող մարդկանց անվտանգությունն ու դրա շահագործման ընթացքում բեռների պահպանվածությունն ապահովելու համար: Փոքրաչափս նավի իրանը կարող է պատրաստված լինել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի նյութերի համակցությունից:

17. Մետաղից, փայտից եւ ապակեպլաստից պատրաստված փոքրաչափս նավի իրանի կառուցվածքը, որը հաշվարկված է 1-3 տարակարգերի IV կատեգորիայի բարդության շրջաններում նավարկության համար, պետք է նախատեսի հավաքակազմի առկայություն, այն փոքրաչափս նավերի համար,

որոնք հաշվարկված է 4-5 տարակարգերի IV կատեգորիայի բարդության շրջաններում նավարկության համար, թույլատրվում է առանց հավաքածուի կառուցվածք:

1-ին տարակարգի IV կատեգորիայի բարդության շրջաններում նավարկության համար հաշվարկված փչովի փոքրաչափս նավերի համար անջրանցիկ կտորներից պատրաստված փոքրաչափս նավի իրանի կառուցվածքը պետք է նախատեսի կոշտ հատակի առկայություն:

Փոքրաչափս նավի կառուցման ժամանակ կիրառվող նյութերը պետք է ընտրվեն՝ հաշվի առնելով շահագործման նախատեսված պայմանները, ինչպիսիք են՝ միջավայրի ջերմաստիճանը, ագրեսիվությունը:

18. Փոքրաչափս նավերի՝ գլխավոր շարժիչների տակ գտնվող հիմքերը, փոքրաչափս նավերի օժանդակ մեխանիզմներն ու սարքվածքները պետք է նավարկության շահագործման շրջաններում ցանկացած իրադրության պայմաններում ապահովեն դրանց ամրակումը:

Նավակային կախովի շարժիչներով սահող փոքրաչափս նավերի հարթ նավախելների կամ կարկառված բարձակների բարձրությունը պետք է լինի ոչ պակաս, քան 380 միլիմետր: Ենթաշարժիչախորշի (թունելախորշի) առկայության դեպքում՝ դրա մեջ պետք է նախատեսվեն նավակողանցքեր:

19. Փոքրաչափս նավերը պետք է ունենան դրանց անհրաժեշտ շարժունակությունն ապահովող ղեկային սարքվածքներ կամ փոքրաչափս նավերի կառավարման այլ միջոցներ:

Ինքնագնաց եւ թիավար փոքրաչափս նավերը թույլատրվում է չհագեցնել նշված սարքավորումներով չհագեցնել:

Փոքրաչափս նավերի վրա ղեկային հեռակառավարման առկայության դեպքում պետք է նախատեսվի նաեւ վթարային ղեկային շարժաբեր, որն անմիջականորեն ներգործում է ղեկային սարքվածքի կոթի, կամ սեկտորի վրա:

22,1 կՎտ եւ ավելի հզորությամբ նավակային կախովի շարժիչներով

ինքնագնաց փոքրաչափ նավերը պետք է սարքավորված լինեն ղեկային հեռակառավարմամբ՝ նախագծողի (շինարարի) նախատեսած պահանջներին համապատասխան:

20. Բոլոր փոքրաչափ նավերի վրա պետք է նախատեսվեն կառանման սարքվածքներ, որոնք ապահովում են կառանման կառույցների կամ այլ նավերի կողեզրերի մոտ դրանց հուսալի ամրակումը եւ քարշակման ճոպանի (մետաղաճոպանի) հուսալի ամրացման հնարավորությունը:

21. Բոլոր փոքրաչափ նավերը պետք է ունենան այնպիսի սարքվածքներ, որոնք այդ նավի նավարկության համար թույլատրելի շրջանում քանու կամ ալեկոծության ժամանակ ապահովում են այդ նավերի անվտանգ քարշակումն այլ նավի միջոցով:

Փոքրաչափ նավի քարշակման սարքվածքը պետք է ապահովի ջրատարողությամբ այդ նավին համանման կամ դրանից պակաս տոննաժ ունեցող այլ նավի քարշակումը իր հաստիքային միջոցներով՝ սեփական շարժասարքերի օգնությամբ:

Փոքրաչափ նավի քարշակման սարքվածքի մեխանիզմների (արտադրատեսակների) քանակն ու ապրանքային անվանացանկը, ինչպես նաեւ փոքրաչափ նավի վրա դրանց դասավորությունը որոշվում է այն նախագծելիս՝ իրանի կառուցվածքային առանձնահատկություններին, դրա տախտակամածային սարքավորումների յուրահատկություններին եւ փոքրաչափ նավի նշանակությանը համապատասխան:

22. Փոքրաչափ նավերը պետք է նախագծված եւ կառուցված լինեն այնպես, որ, հաշվի առնելով փոքրաչափ նավի տեսակը, նշանակությունն ու դրանց շահագործման պայմանները, նվազարկեն մարդու՝ նավից դուրս ընկնելու ռիսկը, ու ապահովեն ջրից նրան նավ բարձրացնելը:

Ուղեւորներին եւ անձնակազմին նավից դուրս ընկնելուց վտանգից պաշտպանելու համար փոքրաչափ նավերի վրա նախատեսվում են

պաշտպանակներ (նավակողի ելուն կամ լեերային սարքվածք), բռնածողեր, անցակամրջակներ, ելարանային սանդուղքներ:

23. Փոքրաչափս նավի մեխանիկական կայանքը պետք է ապահովի անխափան շահագործում բոլոր ռեժիմներում, փոքրաչափս նավերի տվյալ կատեգորիայի համար թույլատրելի կողաթեքման եւ դիֆերենտին դեպքում, իսկ շարժիչի հզորությունը պետք է համապատասխանի փոքրաչափս նավի տվյալ տեսակի համար նախագծային փաստաթղթերով նախատեսված հաշվարկային հզորությանը:

Շարժիչային փոքրաչափս նավերը պետք է նախագծված լինեն այնպես, որ շարժիչների օգտագործած գազերը պարունակեն ոչ ավելի, քան 4,8% ածխածնի օքսիդ (CO):

24. Գործարկման եւ դարձափոխովի սարքվածքների կառուցվածքն ու դասավորվածությունը պետք է ապահովեն յուրաքանչյուր մեխանիզմի գործարկման եւ դարձափոխության հնարավորությունը մեկ մարդու կողմից:

25. Գլխավոր շարժիչի աշխատանքի համար նախատեսված գազային վառելիքի պահման տարողության տեղադրման վայրը պետք է գտնվի բաց տախտակամածի վրա կամ գազաթափանցիկ հատվածամասերում, որոնք տեղակայված են այնպես, որ ցանկացած արտահոսքի դեպքում գազը նավից դուրս գա: Այդ տարողության ամրակումը պետք է բացառի դրա պոկվելը կամ տեղաշարժվելը՝ փոքրաչափս նավի համար թույլատրելի նավարկության շրջանում առավելագույն հնարավոր փոթորկային պայմաններում նավարկելիս:

Դեպի շարժիչ գազ մատակարարող խողովակաշարերը պետք է հերմետիկություն ապահովեն շահագործման բոլոր թույլատրելի ռեժիմներում:

26. Վառելիքի հեղկամբարները, խողովակաշարերն ու ճկափողերը պետք է մեկուսացված եւ պաշտպանված լինեն ջերմային ճառագայթման աղբյուրների ցանկացած ազդեցությունից: Հեղկամբարների նյութը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն դրանց համար պահանջվող վառելիքի տարողությանն ու

տեսակին: Վառելիքի բոլոր հեղկամբարները պետք է ունենան օդափոխության հուսալի համակարգ, որը բացառում է օդային պայթյունավտանգ խառնուրդի գոյացումը:

60°C-ից ցածր բռնկման կետ ունեցող հեղուկ վառելիքը պետք է պահվի այնպիսի հեղկամբարներում, որոնք նավի իրանի հետ ընդհանուր մաս չեն կազմում (շարժական) եւ պետք է լինեն՝

ա) ջերմային ճառագայթման աղբյուրների ցանկացած ազդեցությունից պաշտպանված.

բ) բնակելի հատվածներից առանձնացված:

27. Ափից 500 մետրից պակաս հեռավորության վրա գտնվող գոտում շահագործվող՝ շարժիչային փոքրաչափս նավի արտաքին աղմկային բնութագրի նորմերը՝ ոչ արագընթաց փոքրաչափս նավերի համար ձայնի մակարդակը պետք է լինի ոչ ավելի, քան 75 դԲԱ, իսկ արագընթացների (արագընթաց փոքրաչափս նավեր են համարվում 40 կմ/ժ-ից բարձր արագություն ունեցող նավերը) համար՝ 78 դԲԱ: Արտաքին աղմկային բնութագրերի չափումներն իրականացվում են փոքրաչափս նավի կողեզրի հարթությունից 25 մետր հեռավորության վրա:

28. Շարժիչային փոքրաչափս նավերի վրա տեղադրվող շարժիչների (ոչ շարժական եւ ընդկախ) թույլատրելի հզորությունը որոշվում է նախագծողի (փոքրաչափս նավի շինարարի) նախագծային փաստաթղթերով:

29. Փոքրաչափս նավերի վրա պետք է նախատեսվեն չորացման համակարգ կամ չորացման միջոցներ:

30. Փոքրաչափս նավերի սանիտարակենցաղային եւ բնակելի սրահները պետք է համապատասխանեն սանիտարահամաճարակաբանական պահանջներին:

Սանիտարակենցաղային սրահներ ունեցող փոքրաչափս նավերի վրա պետք է նախատեսվի կոյուղու համակարգ փոքրաչափս նավերից կեղտաջրերն ու կղանքաջրերը հավաքելու եւ հեռացնելու համար, որն իր մեջ ներառում է

սանիտարական սարքավորումներ, կեղտաջրերն ու կղանքաջրերը հավաքելու համար անհրաժեշտ խողովակաշարեր (հիդրավլիկ փակադակով) եւ ցիստեռն կամ հանովի կոնտեյնրներ:

31. Ջրամատակարարման համակարգը (դրա առկայության դեպքում) պետք է ապահովի նավի վրա գտնվող մարդկանց թույլատրելի քանակության համար նախատեսվող խմելու ջրի պահանջը:

32. Շարժիչային փոքրաչափս նավերը պետք է համալրված լինեն հակահրդեհային սարքավորումներով եւ գույքով՝ հաշվի առնելով հրդեհի առաջացման հնարավոր պատճառները:

Հակահրդեհային համակարգը (կրակի դեմ պայքարի միջոցները) պետք է ապահովի(են) շարժիչների պաշտպանիչ պատյանների տակ կրակմարիչի մատուցումը առանց պաշտպանիչ պատյանները բացելու կամ ապամոնտաժելու:

Հակահրդեհային գույքը պետք է տեղադրվի հասանելի, այդ նպատակների համար նախատեսված տեղերում՝ համապատասխան մակնշում կատարելով: Կառավարման կետում պետք է տեղադրվի ոչ պակաս, քան մեկ կրակմարիչ:

33. Բոլոր տախտակամածով բոլոր փոքրաչափս նավերը պետք է ունենան մեքենայական սրահների եւ վառելիքի բաքերի (ցիստեռնների) տեղադրման համար բնական կամ հարկադրական օդափոխություն:

Մեքենայական փակ հատվածները պետք է ունենան օդափոխություն, որը կապահովի կուտակված վառելիքային գոլորշիների հեռացումը նախքան շարժիչի գործարկումը:

34. Փոքրաչափս նավի էլեկտրական սարքավորումները (դրանց նախատեսված լինելու դեպքում) պետք է դրանց շահագործման ընթացքում հուսալիորեն պաշտպանված լինեն մեխանիկական վնասվածքներից, արտաքին միջավայրի ազդեցությունից եւ լինեն անվտանգ շահագործման մեջ:

Ապահովեն էլեկտրական բոլոր շղթաների պաշտպանվածությունը գերբեռնվածությունից եւ կարճ միացումներից:

Ուժահավաքիչ մարտկոցներից անջատվող գազերի կուտակումը կանխելու համար պետք է ապահովել դրանց օդափոխությունը: Փոքրաչափս նավի վրա ուժահավաքիչ մարտկոցները պետք է տեղադրված լինեն անվտանգ եւ ջրից թափանցումից պաշտպանված տեղում: Հրդեհավտանգ եւ պայթյունավտանգ սարքավորումները պետք է կառուցված եւ նավի վրա տեղադրված լինեն այնպես, որպեսզի նվազարկեն հրդեհի առաջացման վտանգը:

Հրդեհավտանգ եւ պայթյունավտանգ սարքավորումների կառուցվածքն ու նավի վրա դրանց դասավորվածությունը պետք է ուղղված լինեն հրդեհի առաջացումն ու տարածումը կանխելուն, հատուկ ուշադրություն պետք է դարձվի՝ բաց բոցով սարքավորումներին. տաքացող մակերեսայիններին, շարժիչներին եւ օժանդակ կայանքներին, վառելիքի եւ յուղի հեղմանը, վառելիքատար եւ յուղատար ոչ փակ խողովակաշարերին:

Արգելվում է էլեկտրական հաղորդագծի անցկացումը մեքենայի տաքացող մասերի վրայով:

35. Փոքրաչափս նավերի բոլոր ոչ շարժական շարժիչները պետք է հագեցված լինեն պաշտպանիչ պատյաններով եւ առանձնացված լինեն նավի բնակելի սրահներից, որպեսզի նվազարկեն հրդեհի առաջացման եւ տարածման վտանգը, ինչպես նաեւ բացառվեն մարդկանց առնչվող դժբախտ պատահարները հետեւյալի արդյունքում՝ արտանետված թունավոր գազերից եւ ծխից թունավորում, բնակելի հատվածներում մարդկանց վրա՝ տաքացած մակերեսայինների ջերմային ճառագայթման, աղմուկի եւ թրթռման ազդեցություն:

Փոքրաչափս նավի շարժիչի տարրերը, որոնք հաճախակի զննում եւ (կամ) տեխնիկական սպասարկում են պահանջում, պետք է լինեն հեշտ հասանելի, մեքենայական հատվածամասի ներսում մեկուսիչ նյութերը պետք է լինեն չայրվող:

60°C-ից բարձր տաքացվող՝ ոչ շարժական շարժիչի շիկացած կամ շարժվող արտաքին մասերը, պետք է հուսալիորեն ծածկված լինեն պատյանով կամ կափարիչով, որպեսզի անձնակազմին վնաս չպատճառեն:

Վառելիքով լիցքավորման, դրա պահպանման, օդափոխության եւ մատակարարման սարքվածքները պետք է մշակված լինեն այնպես, որ նավի վրա հրդեհի եւ պայթյունի առաջացման վտանգը հասցվի նվազագույնի:

36. Փոքրաչափս նավերը սարքավորվում են կապի եւ նավագնացության միջոցներով (4-րդ հավելված):

Նավի նավագնացական սարքավորումներն ու նավագնացական մատակարարումը պետք է նավավարին անընդմեջ ապահովեն նավի գտնվելու վայրի, ուղղույթի եւ արագության վերաբերյալ հավաստի տեղեկություններով, ինչպես նաեւ այնպիսի տեղեկություններով, որոնք թույլ են տալիս շահագործման համար նախատեսված շրջաններում եւ պայմաններում անվտանգ կառավարել փոքրաչափս նավը:

37. Կապի եւ նավագնացության միջոցներով հագեցված բոլոր փոքրաչափս նավերի վրա ռադիոսարքավորումների էներգասնման համար պետք է լինեն էլեկտրական էներգիայի ոչ պակաս, քան երկու աղբյուրներ՝ հիմնական եւ պահուստային:

38. Նավարկության շրջանների 0 - III կատեգորիայի բարդության ծովային շրջաններում օգտագործվող փոքրաչափս նավերի կառուցվածքը պետք է նախատեսի արբանյակային նավագնացության ապարատուրաներ (այդ թվում՝ ԳԼՈՆԱՍՍ կամ ԳԼՈՆԱՍՍ՝ GPS-ի հետ համատեղ) տեղադրման եւ դրա գործառնման հնարաորություն:

Շրջանառության մեջ բաց թողնվող եւ շահագործման մեջ գտնվող փոքրաչափս նավերը նշված ապարատուրայով սարքավորելը իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով

Բոլոր փոքրաչափս նավերը, որոնք օգտագործվում են նավարկության շրջանների 0 - IV կատեգորիայի բարդության ծովային շրջաններում, պետք է ունենան կապի միջոցներ, որոնք ապահովում են ծովում անվտանգության՝

ներառյալ եղանակի տեսության, ծովի ալեկոծության եւ սառցային իրադրության վերաբերյալ տեղեկությունների հաղորդում եւ ընդունում, փոքրաչափ նավի անվտանգ նավարկության վերաբերյալ նավագնացական հանձնարարականներ, փոթորկի վերաբերյալ նախազգուշացումներ եւ տեղեկացումներ:

Փոքրաչափ նավի ռադիոսարքերը պետք է պատրաստված լինեն ջրապաշտպան կատարմամբ:

39. Նավարկության ծովային շրջաններում օգտագործվող փոքրաչափ նավերի շահագործման ժամանակ դրանց վրա պետք է տեղադրված լինի մագնիսական կողմնացույց:

40. Ներքին նավարկելի ուղիներում սահմանափակ տեսանելիության (1000 մետրից պակաս) պայմաններում եւ գիշերային ժամերին շահագործման համար նախազգված փոքրաչափ նավերի վրա, անկախ դրանց շահագործման շրջանից, պետք է ռադիոտեղորոշման կայան տեղադրված լինի:

41. Փոքրաչափ նավերը պետք է ունենան փրկարարն եւ ազդանշանային միջոցներ՝ կախված փոքրաչափ նավի կատեգորիայից՝ համաձայն 5-րդ հավելվածի:

42. Նախազծողը պետք է նախապատրաստի, իսկ փոքրաչափ նավի շինարարը՝ յուրաքանչյուր փոքրաչափ նավին ապահովի շահագործման փաստաթղթերով, որոնց կազմում գծագրերի (ընդհանուր դասավորության եւ այլ կառուցվածքների, շահագործման մեջ անհրաժեշտ այլ գծագրերի), սխեմաների (հակահրդեհային եւ այլ համակարգերի, մեկուսացման, պատվածքի, դասավորության, մատակարարման, փրկարար միջոցների, էլեկտրական միացումների, ռադիոէլեկտրոնային միջոցների, նավագնացական սարքավորումների, ավտոմատիկայի, ազդանշանային եւ վթարային պաշտպանության եւ այլ սխեմաներ) եւ փոքրաչափ նավերի տեխնիկական միջոցների շահագործման վերաբերյալ ձեռնարկների (հրահանգների) հետ մեկտեղ պետք է ընդգրկվեն փոքրաչափ նավի նստեցվածքի եւ կայունության, անսուզելիության մասին տեղեկատվություն, շարժունակության բնութագրերի

վերաբերյալ տեղեկություններ, հարատևության համար պայքարի վերաբերյալ սխեմա եւ ցուցումներ:

ՀՈԴՎԱԾ 5. ՓՈՔՐԱԶԱՓՍ ՆԱՎԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

43. Ղեկային սարքվածքի կառուցվածքը նավակային կախովի շարժիչով հեռակառավարման ժամանակ պետք է, անհրաժեշտության դեպքում, ապահովի դրա ազատ հետզցումը, իսկ նավակային կախովի շարժիչների զույգված տեղակայման դեպքում՝ դրանց շրջադարձի համաժամությունն ու յուրաքննաչյուր շարժիչի հետզցումն առանձին:

Ղեկի դիրքը պետք է հստակ նշվի փոքրաչափս նավի կառավարման կետում՝ ղեկախցիկում: Եթե ղեկի դիրքի ցուցիչը էլեկտրական է, ապա այն պետք է ունենա սնման առանձին շղթա:

Եթե փոքրաչափս նավի նավախելի ուղղությամբ բավականաչափ անարգել տեսադաշտ չի ապահովվում, ապա տեսադաշտն ընդլայնելու համար թույլատրվում է հայելիների, վիդեոսարքվածքների եւ օպտիկական այլ օժանդակ միջոցների տեղադրում:

Օրվա ցանկացած ժամի լուսավորման միջոցների (լուսարձակների) օգնությամբ պետք է անարգել տեսադաշտ ապահովվի ղեկախցիկի պատուհաններից:

Ղեկախցիկներում օգտագործվող ապակիների թափանցիկության աստիճանը պետք է կազմի ոչ պակաս, քան 75 տոկոս:

44. Փոքրաչափս նավերը պետք է սարքավորված լինեն՝ լուսավորան սարքերով, ընթացային տարբերիչ լույսերով եւ ձայնային ազդանշանի միջոցներով: 22,1 կՎտ-ից պակաս հզորությամբ շարժիչներով թիավար նավակները եւ շարժիչայն նավակները ենթակա չեն լուսավորման սարքերով, ընթացային տարբերիչ լույսերով պարտադիր սարքավորման: Օրվա մութ

ժամերին փոքրաչափ նավերի շահագործումը թույլատրվում է միայն միացրած լուսավորման սարքերի ու ընթացային տարբերիչ լույսերի պայմաններում:

45. Արգելվում է փոքրաչափ այն նավերի շահագործումը, որոնք ունեն հետեւյալ անսարքությունները՝

ա) խորշերի, հավաքակազմի ճեղքվածքների եւ իրանի թիթեղվածքի առկայություն (անկախ գտնվելու վայրից)։

բ) փոքրաչափ նավի՝ կառուցվածքով նախատեսված հերմոհատվածամասերի եւ օդային արկղերի բացակայություն կամ ապահերմոտիկացում։

գ) ապահովված չէ ղեկի վերադարսման լրիվ անկունը (35 աստիճան յուրաքանչյուր կողեզրին), դժվարացած է ղեկանիվի պտտումը։

դ) ղեկի սայրի կամ ղեկի շարժաբերի դետալների (ուղղորդիչ ճախաբակեր, հենակային առանցքակալներ, ձգիչ ձգասարքեր, ղեկաճոպանային փոխանցում) վնասվածք, ղեկաճոպանի մանվածքաթելերի խզվածքների առկայություն։

ե) ղեկի շարժաբերի ամրակման՝ կառուցվածքով նախատեսված դետալների (մանեկներ, երիթակներ, հակամանեկներ) բացակայություն։

զ) վառելիքի արտահոսք բաքերից, սնման համակարգի ճկափողերից։

է) շարժիչի, կախովի շարժիչի թրթռման առկայություն, որը գերազանցում է շահագործման փաստաթղթերով նախատեսված թույլատրելի արժեքները։

ը) շարժիչի, դարձիչ ռեդուկտորի հեռակառավարման համակարգի վնասվածք։

46. Փոքրաչափ նավերի նավանցումը թույլատրվում է նավարկելի ջրարգելակներով նավանցման կանոններին համապատասխան:

47. Փոքրաչափ նավերի տեխնիկական միջոցների տեխնիկական սպասարկումը, վերանորոգումն ու շահագործումն կատարվում են շինարարների շահագործման ձեռնարկներին (հրահանգներին) եւ Մաքսային միության սույն

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան:

48. Փոքրաչափս նավերի տեխնիկական միջոցների՝ նավարկության ժամանակ հայտնաբերված անսարքությունները, որոնց վերացումը պահանջում է գործածությունից հանել անսարք օբյեկտները, պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում վերացվեն նավավարի կողմից: Եթե նավարկության իրադրությունը թույլ չի տալիս անսարք օբյեկտները հանել շահագործումից, ապա պետք է ձեռնարկվեն մարդկանց անվտանգությունն ապահովող եւ փոքրաչափս նավի ու դրա տեխնիկական միջոցների հնարավոր վնասումը կանխող միջոցներ:

49. Փոքրաչափս նավերի շահագործման ընթացքում չի թույլատրվում՝ նավն արտադրողի կողմից սահմանված գերազանցում հետեւյալի մասով՝

- ա) բեռնունակության.
- բ) ուղեւորատարողության.
- գ) շարժիչի հզորության.
- դ) ալիքի սահմանային թույլատրելի բարձրության.
- ե) նավարկության շրջանի եւ ափից հեռացածության:

50. Փոքրաչափս նավի նավարկության անվտանգությունն ապահովելու նպատակով նավարկությունից առաջ անհրաժեշտ է համոզվել, որ՝

նավը, շարժիչը, ուժահավաքիչ մարտկոցը, նավամբարի պոմպը, նավի սարքվածքներն ու սարքավորումները, նավագնացական լույսերը գտնվում են սարքին վիճակում.

վառելիքի բաքում առկա է բավարար քանակությամբ վառելիք.

նավի վրա փրկաբաճկոններն ու փրկարար այլ սարքավորումները տեղաբաշխված են դրա վրա գտնվող մարդկանց թվին համապատասխան.

խարիսխը ու կառանման ճոպանները ամրակցված են կողեզրին,

իրանի եւ անջրանցիկ հատվածամասերի խցափակիչները (հեղուկաթափ

խցանները) հուսալիորեն փակված են, փչովի հատվածամասերի փականների կափարիչները նույնպես փակված են:

բոլոր ուղեւորներին ծանոթացրել են փոքրաչափս նավի վրա վարքագծի կանոններին եւ տեղավորված են փոքրաչափս նավի հաստիքային տեղերում.

կախովի շարժիչն ամրակցված է փոքրաչափս նավի հարթ նավախելին:

51. Փոքրաչափս նավերի վրա բեռների բեռնմ, բեռնաթափում, ուղեւորների նստեցում եւ իջեցում կազմակերպելիս արգելվում է՝

ա) փոքրաչափս նավերը բեռնավորել նախագծողի կամ արտադրող-գործարանի կողմից սահմանված բեռնունակությունից ավելի.

բ) փոքրաչափս նավի վրա ընդունել այնպիսի քանակությամբ մարդկանց, որը գերազանցում է նավի վրա գտնվող մարդկանց քանակության նորման:

52. Շարժիչների շահագործումն արգելվում է այն դեպքերում, եթե՝

ա) շարժիչների աշխատանքային պարամետրերը գերազանցում են շահագործման ձեռնարկներով (հրահանգներով) նախատեսված սահմանային արժեքները.

բ) գլանաձեւ ականոցներում եւ կափարիչներում, շարժման դետալներում, բոցամուղների մղիչ խողովակաշարերում, յուղատար խողովակաշարերում, գործարկման սարքվածքի դետալներում եւ օդի բաշխման սարքվածքում առկա են ճեղքվածքներ ու խորշեր.

գ) գլանամխոցային խմբի եւ այլ դետալների բացակներն ու մաշվածքները գերազանցում են շահագործման ձեռնարկներով (հրահանգներով) սահմանված սահմանային նորմերը.

դ) օժանդակ նշանակության համակարգերը (վառելիքի, յուղման, ելքի օդի) կամ տեխնիկական միջոցները եւ շարժիչը սպասարկող սարքավորումները (պոմպեր, հովացուցիչներ, տաքացիչներ, օդային ճնշակներ) գտնվում են անսարք վիճակում.

ե) գործարկման, դարձափոխային կամ լիսեռադարձման սարքվածքները գտնվում են անսարք վիճակում:

զ) կարգավորիչները գտնվում են անսարք վիճակում:

53. Փոքրաչափս նավի՝ նավարկության դուրս գալու յուրաքանչյուր դեպքից առաջ, նախքան ջրանցք կամ ջրարգելակ մտնելը, ղեկային սարքվածքը պետք է զննվի եւ ստուգվի գործողության մեջ գտնվելիս:

54. Փոքրաչափս նավի շահագործման ժամանակահատվածում խարսխային սարքվածքը պետք է պատրաստ լինի օգտագործման:

55. Խարսխային սարքվածքի անսարքության դեպքում փոքրաչափս նավի շահագործումն արգելվում է:

56. Արգելվում է փոքրաչափս նավի շահագործումը, եթե դրա կառանման սարքավորումները (նախագծողի (շինարարի) կողմից նախատեսված ճոպանաայունները, կեռերը, հոլովակները, ճոպանանցքերը, կապանային զղլակներն ու այլ հարմարանքները) չեն ապահովում փոքրաչափս նավի պահումը կառանացցի, նավամատույցի մոտ դրա կայանման եւ նավանցման ժամանակ: Նավակառանման պողպատյա ճոպանների համար պոկված մետաղալարերի թիվը չպետք է գերազանցի դրանց ընդհանուր թվի 20%-ը մետաղաճոպանի տրամագծի 6 պատիկ երկարության վրա: Արգելվում է սինթետիկ նյութերից պատրաստված ճոպանների օգտագործումը, եթե՝

ա) հայտնաբերվել են քերամաշվածքի հատկանիշներ՝ մանրաթելերի խզվածքով (կտրվածքներ, հյուսերի շեղում եւ այլ ակնհայտ թերություններ):

բ) աշխատանքային բեռնվածության ժամանակ ճոպանը երկարում է ավելի, քան 25 %-ով, եւ բեռնվածությունը հանելուց հետո չի վերականգնում իր նախկին երկարությունը:

57. Սինթետիկ եւ բուսական թելքավոր նյութերից պատրաստված ճոպանների շահագործման ժամանակ պետք է պահպանվեն հետեւյալ պահանջները՝

ա) ճոպանասյունների եւ հոլովակների մակերեսայինները չպետք է ունենան խանդակներ, ծլեպներ եւ ժանգաբծեր:

բ) որպես սեւեռակ անհրաժեշտ է օգտագործել միայն բուսական նյութերից պատրաստված ճոպաններ:

գ) ճոպանասյունների վրա պետք է դրվի ոչ պակաս, քան 8 փաթույթ, ընդ որում՝ վերին փաթույթները պետք է ամրացված լինեն բուսական նյութերից պատրաստված ճոպանի կցվանքներով:

դ) սինթետիկ նյութերից պատրաստված ճոպանները թույլատրվում է օգտագործել եւ պահել մինուս 20-ից մինչեւ պլյուս 40°C-ի պայմաններում:

58. Առագաստային փոքրաչափս նավերի վրա պետք է իրականացվի նավի կայմերի տեխնիկական սպասարկում եւ շարժական մասերի պարբերաբար յուղում: Ընդ որում, անհրաժեշտ է անկացնել՝

ա) ինքնին կայմերի ամբարձման ու ներգցման, ազդանշանների, անտենայի բարձացման, կրելու եւ իջեցման համար գործող մեխանիզմների եւ հարմարանքների սարքինության,

բ) կատարողական մեխանիզմների վերջամասային անջատիչների գործառման ճշտությանը,

գ) նավի իրանին կամ վերնակառույցներին կայմերի ամրակման,

դ) շանթարգելի սարքինության,

ե) առաջացած անսարքությունների վերացման ստուգում:

59. Շահագործման ընթացքում փոքրաչափս նավերի կառուցվածքում փոփոխություններ կատարելիս անվտանգության սահմանված մակարդակի իջեցում չի թույլատրվում:

60. Շահագործման ընթացքում փոքրաչափս նավերի վրա պետք է պահպանվեն նավթային բոլոր մնացորդները, կեղտոտ ջուրը, աղբը, սննդային մնացորդները, ինչպես նաեւ շրջակա միջավայրն աղտոտող նյութերը, որոնք

հանձնվում են բազայի տարածքում կամ նավահանգստային առափնյա կառույցներում գտնվող այն ընդունիչ սարքվածքներ (կոնտեյներներ, տարողություններ), որոնք իրականացնում են տվյալ նյութերի ընդունումը:

61. Շարժիչի շահագործման ժամանակ ջրային օբյեկտների՝ նավթամթերքներով աղտոտումը կանխելու համար անհրաժեշտ է՝

ա) շարժիչի աշխատանքի ժամանակ պարբերաբար ստուգել դրա վառելիքային համակարգի միացումների վիճակը եւ, վառելիքի կաթում հայտնաբերելու դեպքում, միջոցներ ձեռնարկել անսարքության անհապաղ վերացման նպատակով: Եթե վառելիքային համակարգի անսարքությունն անհնար է վերացնել շարժիչի աշխատանքի ժամանակ, ապա հարկավոր է կանգնեցնել շարժիչը, պարզել պատճառներն ու միջոցներ ձեռնարկել վառելիքի՝ նավից դուրս ներթափանցումը կանխելու ուղղությամբ.

բ) ռեդուկտորի եւ դրա համակարգի վերանորոգման եւ զննության ժամանակ դրանցում գտնվող վառելիքն ու յուղը արտաթողել նախապես պատրաստված հատուկ տակնոցների կամ այլ տարողությունների մեջ: Արգելվում է վառելիք պարունակող բոլոր խառնուրդները թափել ներքին եւ տարածքային ջրերի մեջ:

62. Փոքրաչափս նավը վառելիքով լիցքավորելիս ջրավազանները նավթամթերքներով աղտոտվելուց պաշտպանելու համար անհրաժեշտ է՝

նախքան ընդունումն սկսելը՝

ա) ստուգել փոքրաչափս նավի կառանման հուսալիությունը.

բ) ստուգել վառելիքի ընդունման համակարգի վրայի փականների բացման սարքինությունն ու ճշտությունը.

գ) ստուգել օդային եւ օդափոխության խողովակների սարքինությունն ու վիճակը.

դ) վառելիքի ցիստեռններում (բաքերում) կատարել վառելիքի չափում.

ե) ստուգել ազդանշանային համակարգերի եւ վառելիքի մակարդակը

չափելու համար նախատեսված սարքվածքների սարքինությունը.

գ) ճկափողերի միացման կետերի տակ դնել տակդիրներ՝ տախտակամածի վրա թափված վառելիքի՝ ջուր լցվելը բացառելու համար.

ե) փակել տախտակամածի նավակողանցքերը հատուկ խցափակիչներով,

ը) լցավորողի հետ հաստատել հուսալի տեսողական եւ ձայնային կապ.

թ) նախապես պատրաստել անհրաժեշտ չափսի եւ ձեւի հնոտի եւ ձագար.

ընդունման ժամանակ՝

ա) ստուգել վառելիքատար ճկափողերի եւ դրանց միացումների հերմետիկությունը ճնշումը՝ մինչեւ աշխատանքային ճնշման աստիճանաբար բարձրացնելու միջոցով.

բ) մշտապես հսկողության տակ պահել ընդունվող վառելիքի մակարդակը ցիստեռնների մամլում եւ գերլցում թույլ չտալու համար.

գ) թույլ չտալ վառելիքի ընդունման խողովակաշարի ամբողջական եւ կտրուկ փակում.

դ) մշտապես հետեւել ճկափողերում առկա ճնշմանը՝ թույլ չտալով դրա գերազանցումը տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմայից.

ե) փականներով եւ ճկափողերով վառելիքի աննշան հոսաթողում հայտնաբերելու դեպքում իջեցնել ճնշումը եւ սեղմել ճկափողային միացումները: Հոսաթողումը դադարեցնելը չի հաջողվում՝ դադարեցնել վառելիքի ընդունումը, պարզել պատճառներն ու վերացնել անսարքությունը (փոխարինել միջադիրները, անսարք ճկափողը).

վառելիքի ընդունման ավարտից հետո՝

ա) բոլոր հնարավոր միջոցներով (փչամաքրում օդով, ջրով լվացում, պոմպահանումով, ինքնահոսով եւ այլն) ճկափողերից հեռացնել վառելիքի մնացորդները: Ջրով լվացման դեպքում կեղտոտված ջուրը դատարկել հատուկ

տարողության մեջ.

բ) անջատել ընդունող ճկափողերը միայն վառելիքը դրանցից հեռացնելուց հետո.

գ) անջատված ճկափողերի ծայրերին տեղադրել խցափակիչներ:

63. Հրդեհավտանգ իրավիճակների առաջացումը կանխարգելելու եւ դրանց հետեւանքները վերացնելու նպատակներով փոքրաչափս նավի նախագծողն ու շինարարը հրդեհային անվտանգության ապահովման համակարգի շրջանակներում պետք է նախատեսեն՝

ա) հակահրդեհային կառուցվածքային պաշտպանություն,

բ) հրդեհի առաջացման վտանգը նվազարկող հրդեհավտանգ օբյեկտների կառուցվածքը եւ դասավորությունը.

գ) հակահրդեհային համակարգեր, որոնք ըստ այրման նյութի տեսակի համապատասխանում են հրդեհի դասին, եւ հրդեհի ազդանշանման համակարգեր.

դ) հակահրդեհային միջոցների լրակազմությունն ու գործելու պատրաստականությունը:

64. Փոքրաչափս նավի վրա չի թույլատրվում՝

ա) ինքնուրույն փոփոխություններ կատարել նավի սրահների էլեկտրամատակարարման համակարգերում, տեղադրել հավելյալ խրոցակային վարդակներ եւ ճյուղավորիչներ.

բ) կենցաղային եւ արտադրական աղբը հավաքելու համար օգտագործել այրվող նյութերից պատրաստված տարողություններ.

գ) վառելիքաքսուքային, ինքնաբռնկելի եւ դյուրաբոցավառ նյութերը պահել բաց տարայում եւ այնպիսի վայրերում, որոնք նախատեսված չեն այդ նպատակների համար:

65. Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը պետք է ժամանակի ընթացքում իրենց որակները կորցնելու ենթակա փրկարար միջոցների համար սահմանի ծառայության ժամկետ: Նման փրկարար միջոցները պետք է ունենան մակնշվածք, որոնք ցույց կտան դրանց տարիքը կամ այն ամսաթիվը, երբ դրանք պետք է փոխարինվեն:

Փրկարար միջոցները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

պատրաստված լինեն պատշաճ կերպով եւ պատշաճ նյութերից.

չդառնան օգտագործման համար ոչ պիտանի օդի -30 -ից մինչեւ $+65^{\circ}\text{C}$ -ի պայմաններում դրանք պահելու դեպքում.

եթե ենթադրվում է, որ դրանց օգտագործման ժամանակ հնարավոր է դրանց ընկնելը ծովի ջրի մեջ, ապա աշխատեն ծովի ջրի -1 -ից մինչեւ $+30^{\circ}\text{C}$ -ի պայմաններում.

այն վայրերում, որտեղ կիրառելի է, լինեն նեխման, քայքայման նկատմամբ կայուն եւ չենթարկվեն ծովի ջրի, նավթի կամ սնկերի չափազանց մեծ ներգործությանը.

եթե դրանք բաց են արելի ճառագայթների ներգործության համար, ապա դրանով հանդերձ չկորցնեն իրենց որակները.

լինել լավ տեսանելի գույնի ամենուրեք, որտեղ դա կնպաստի դրանց հայտնաբերմանը.

ապահովված լինեն լուսաանդրադարձիչ նյութով այն վայրերում, որտեղ դա կնպաստի դրանց հայտնաբերմանը.

եթե դրանք նախատեսված են ալեկոծության ժամանակ օգտագործվելու համար, ապա բավարար աշխատեն այդպիսի պայմաններում:

66. Ջրային օբյեկտների, մերձափնյա գոտու էկոլոգիական վիճակի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու եւ նավագնացության

անվտանգությանը սպառնացող վտանգի առաջացումը բացառելու համար շահագործումից հանված, վթարային, ոչ պիտանի դարձած կամ լքված փոքրաչափս նավերը պետք է օգտահանվեն: Նման նավերի օգտահանման պատասխանատվությունը դրվում է սեփականատիրոջ վրա:

67. Փոքրաչափս նավերի օգտահանումը (մասնատումը) պետք է կազմակերպվի եւ անցկացվի այդ նպատակների համար հատուկ հատկացված եւ սարքավորված վայրերում:

68. Տեխնոլոգիական գործընթացների ռեժիմները, օգտահանման գործողությունների կազմն ու հաջորդականությունը պետք է ապահովեն մարդկանց կյանքի եւ առողջության անվտանգությունը փոքրաչափս նավերի (փոքրաչափս նավերի տեխնիկական միջոցների) օգտահանման ընթացքում՝ ինչպես սովորական պայմաններում, այնպես էլ վթարային իրավիճակներում, որոնք առաջացել են օգտահանման ընթացքում:

69. Փոքրաչափս նավերի համապատասխանությունը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին ապահովվում է դրա անվտանգության պահանջների կատարմամբ անմիջականորեն կամ այն ստանդարտների պահանջների կատարմամբ, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքով ապահովվում է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների, ինչպես նաեւ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատումն (հաստատումը) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ (այսուհետ՝ ստանդարտներ) պարունակող ստանդարտների պահպանումը:

Ստանդարտների պահանջները կամավոր հիմունքով կատարելը վկայում է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանության մասին:

70. Սույն հոդվածի 69-րդ կետում նշված ստանդարտների ցանկերը

հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի կողմից:

ՀՈԴՎԱԾ 6. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

71. Փոքրաչափս նավերի նույնականացումն իրականացվում է՝

ա) ձեռք բերողի (գնորդի)՝ փոքրաչափս նավերի հիմնավորված ընտրության իրավունքի ապահովման նպատակով՝ հաշվի առնելով դրանց վերաբերյալ արժանահավատ տեղեկությունը,

բ) ձեռք բերողներին փոքրաչափս նավի անբարեխիղճ արտադրողից (շինարարից, վաճառողից) պաշտպանելու,

գ) փոքրաչափս նավի գնորդին (ձեռք բերողին) մոլորության մեջ չզգելու,

դ) Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին փոքրաչափս նավերի համապատասխանությունը սահմանելու,

ե) արտադրողի (փոքրաչափս նավի շինարարի, վաճառողի) կողմից հայտարարագրվող (հայտարված) տեղեկություններին փոքրաչափս նավերի համապատասխանությունը սահմանելու նպատակով:

72. Փոքրաչափս նավերի, փրկարարն միջոցների եւ (կամ) սարքավորումների նույնականացումն իրականացնում են՝

ա) Մաքսային միության անդամ պետությունների մարմինները, որոնք իրականացնում են փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) փոքրաչափս նավերի համար սարքավորումների համապատասխանության գնահատում (հաստատում)։

բ) Մաքսային միության անդամ պետությունների լիազորված մարմիններն՝ իրենց իրավասության շրջանակներում Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս:

73. Փոքրաչափ նավերի նույնականացումն իրականացվում է՝ հաշվի առնելով արտադրողի (փոքրաչափ նավի շինարարի, վաճառողի) կողմից ներկայացված նկարագրություններում նշված հատկանիշները:

Որպես նկարագրություն կարող են օգտագործվել նույնականացվող փոքրաչափ նավերը բնութագրող միջպետական եւ ազգային ստանդարտները, կազմակերպությունների ստանդարտները, ուղեկցող փաստաթղթերը, մատակարարման պայմանագրերը, պայմանագրերը, մասնագրերը, մակնշման ցուցանակների մակագրությունները եւ այլ փաստաթղթեր:

74. Փոքրաչափ նավերի նույնականացումն իրականացվում է 6-րդ հավելվածում նշված կարգի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

75. Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ բացթողնվող փոքրաչափ նավերը եւ (կամ) սարքավորումները ենթակա են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման:

Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատումն անցկացվում է հետեւյալ ձեւերով՝ դասակարգում, համապատասխանության հաստատում, պետական հսկողություն (վերահսկողություն):

76. Համապատասխանության հաստատումը

1. Փոքրաչափ նավերի եւ (կամ) սարքավորումների համապատասխանության հավաստումն իրականացվում է արտադրանքը բաց թողնելիս՝ Մաքսային միության Հանձնաժողովի կողմից հաստատված միասնականացված ընթացակարգերին համապատասխան:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգին փոքրաչափ նավերի եւ (կամ)

սարքավորումների համապատասխանության հաստատումն իրականացվում է՝

Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ներառված սերտիֆիկացման հավատարմագրված (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմնի (այսուհետ՝ սերտիֆիկացման մարմին) կողմից սերտիֆիկացման ձեւով:

3. Սերտիֆիկացումն անցկացվում է 8-րդ հավելվածի 1-ին աղյուսակում բերված պարտադիր սերտիֆիկացման ենթակա Օբյեկտների ցանկում ներառված փոքրաչափս նավերի եւ (կամ) սարքավորումների նկատմամբ:

4. Համապատասխանության հաստատում անցկացնելիս ստուգվում է փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, որոնք տրվել են անմիջականորեն կամ սահմանվել են սույն Տեխնիկական կանոնակարգի 69-րդ հոդվածում նշված ստանդարտներում:

5. Փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության հաստատում անցկացնելիս հայտատուն կազմում է սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանությունը հավաստող՝ փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է՝

անվտանգության հիմնավորումը.

տեխնիկական պայմանները (առկայության դեպքում).

շահագործման փաստաթղթերը.

69-րդ կետին համապատասխան՝ ստանդարտների ցանկը, որոնց պահանջներին պետք է համապատասխանեն տվյալ փոքրաչափս նավերը, փրկարար միջոցները, փրկարար միջոցները եւ (կամ) սարքավորումները (շինարարի կողմից դրանց կիրառման դեպքում).

ապրանքաուղեկից փաստաթղթերը (խմբաքանակի, միավոր արտադրատեսակի համար), անցկացված փորձարկումների մասին տեղեկությունները (առկայության դեպքում)։

շինարարի, վաճառողի, օտարերկրյա արտադրողի գործառույթներ իրականացնող անձի եւ (կամ) փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից անցկացված՝ փոքրաչափ նավերի եւ (կամ) սարքավորումների փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում)։

կոմպլեկտավորող արտադրատեսակների համապատասխանության սերտիֆիկատները կամ դրանց փորձարկումների արձանագրությունները (առկայության դեպքում)։

ստացված սերտիֆիկացման արտասահմանյան մարմիններից ստացված տվյալ փոքրաչափ նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության սերտիֆիկատները (առկայության դեպքում)։

սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին փոքրաչափ նավերի եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հավաստող այլ փաստաթղթեր (առկայության դեպքում)։

6. Փոքրաչափ նավերի եւ (կամ) սարքավորումների սերտիֆիկացումն իրականացվում է՝ համաձայն 9-րդ հավելվածի կարգի։

77. Շրջանառության մեջ բացթողման դեպքում փոքրաչափ նավերի դասակարգումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ համաձայն 7-րդ հավելվածի կարգի, այն փոքրաչափ նավերի նկատմամբ, որոնք ընդգրկված են 8-րդ հավելվածի 2-րդ աղյուսակում նշված դասակարգման ենթակա Օբյեկտների ցանկում։

Փոքրաչափ նավերը դասակարգելիս որպես հայտատու կարող է հանդես գալ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ ֆիզիկական անձը՝

որպես անհատ ձեռնարկատեր, որը հանդիսանում է շինարար կամ վաճառող, կամ օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնող անձը:

78. Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը փոքրաչափս նավի շինարարության տեխնիկական դիտարկման եւ (կամ) փոքրաչափս նավի եւ դրա տարրերի զննման դրական արդյունքների հիման վրա տրամադրում է դասակարգման մասին վկայական:

79. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման դեպքում փոքրաչափս նավերի զննումն իրականացնելիս Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը տրամադրում է դասակարգման մասին վկայական՝ 5 տարի ժամկետով:

80. Արտադրանքի շրջանառության մեջ բացթողման դեպքում փոքրաչափս նավի դասակարգման վկայականը կամ համապատասխանության սերտիֆիկատը հանդիսանում է միակ փաստաթուղթը, որը հավաստում է փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

Դասակարգման վկայականն ու համապատասխանության սերտիֆիկատն ունեն հավասար իրավաբանական ուժ եւ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում գործում են այն փոքրաչափս նավերի եւ (կամ) սարքավորումների նկատմամբ, որոնք Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ բաց են թողնվում դասակարգման վկայականի կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամանակ, եւ կիրառելի են յուրաքանչյուր միավորի (փոքրաչափս նավերի եւ (կամ) սարքավորումների) նկատմամբ՝ դրա ծառայության ժամկետի ընթացքում:

81. Շահագործման փուլում համապատասխանության գնահատումը կատարվում է տեխնիկական զննման եւ դասակարգման ձեռով: Շահագործման մեջ գտնվող կարգավորման օբյեկտների համապատասխանության գնահատման ընթացակարգերի անցկացման կարգը, ինչպես նաեւ շահագործման մեջ գտնվող կարգավորման օբյեկտներին ներկայացվող պահանջների

համապատասխանության հավաստման մասին փաստաթղթերի ձեւերը սահմանվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

ՀՈԴՎԱԾ 8. ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱԴՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՇԱՆՈՎ ՄԱԿՆՇՈՒՄԸ

82. Անվտանգության պահանջներին համապատասխանող եւ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատման ընթացակարգն անցած փոքրաչափս նավերը պետք է ունենան Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանով մակնշում:

83. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է փոքրաչափս նավերը շուկայում շրջանառության մեջ բացթողնելուց առաջ:

84. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է անմիջականորեն փոքրաչափս նավի վրա կամ նշվում է շահագործման փաստաթղթերում:

Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է դրա հստակ պատկեր ապահովող ցանկացած եղանակով:

85. Փոքրաչափս նավերի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով վկայում է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրանց համապատասխանության մասին:

ՀՈԴՎԱԾ 9. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

86. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի

պահանջներին չհամապատասխանող փոքրաչափս նավերի կամ դրանց նկատմամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հաստատման) ենթակա կամ առանց համապատասխանության գնահատման (հաստատման) փաստաթղթի եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների շուկայում առանց շրջանառության միասնական նշանով մակնշման շրջանառության մեջ դրվող կամ գտնվող արտադրանքի կամ սարքավորումների հայտնաբերման դեպքում յուրաքանչյուր Կողմի լիազորված մարմինները ձեռնարկում են միջոցներ՝ տվյալ արտադրանքի՝ շրջանառության մեջ բացթողումը կանխելու, Կողմերի օրենսդրության համաձայն՝ շրջանառությունից այն հանելու, ինչպես նաեւ մյուս Կողմերին դրա մասին տեղեկացնելու համար:

87. Պաշտպանության հողվածի կիրառման համար հիմք կարող են ծառայել հետեւյալ դեպքերը.

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4-5-րդ հոդվածների պահանջները չկատարելը.

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 69-րդ կետում նշված ստանդարտների պահանջները չպահպանելը, եթե տվյալ ստանդարտները կիրառվել են.

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 8-րդ հոդվածում շարադրված կանոնները չպահպանելը.

պետական հսկողության (վերահսկողության) արդյունքներով.

դասակարգման լիազորված մարմնի (սերտիֆիկացման մարմնի) զննման արդյունքներով (տեսչական հսկողության):

88. Եթե Մաքսային միության մյուս անդամ պետությունների իրավասու մարմինները բողոք են ներկայացնում 87-րդ կետում հիշատակված որոշման դեմ, ապա Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան անհապաղ անցկացնում է խորհրդակցություններ Մաքսային միության բոլոր անդամ

պետությունների իրավասու մարմինների հետ՝ փոխընդունելի որոշում կայացնելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1

«Փոքրաչափս նավերի անվտանգության
մասին» Մաքսային միության
տեխնիկական կանոնակարգի

**Այն փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ փոքրաչափս նավերի
համար սարքավորումների ցանկը, որոնց վրա տարածվում է Մաքսային
միության սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը**

1. Փոքրաչափս նավեր:
2. Փոքրաչափս նավերի սարքավորումներ՝
 - 1) իրաններում տեղադրվող եւ նավախելային շարժաբերով շարժիչների համար բռնկումից պաշտպանված սարքավորումներ.
 - 2) միացված կցորդման դեպքում գործարկումից պաշտպանման սարքվածքներ՝ արտաքին շարժիչների համար.
 - 3) ղեկային անիվներ, կառավարման մեխանիզմներ եւ մետաղաճոպաններ՝ հավաքված.
 - 4) վառելիքի բաքեր եւ ճկափողեր.
 - 5) գործարանային պատրաստման ելանցքներ եւ լուսանցույցներ:
3. Փրկարար միջոցներ՝
 - 1) փրկաբաճկոնակներ.
 - 2) փրկաշրջաններ.
 - 3) լաստեր փրկարար:

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 2

«Փոքրաչափ նավերի անվտանգության
մասին» Մաքսային միության
տեխնիկական կանոնակարգի

Փոքրաչափ նավերին ներկայացվող անվտանգության պահանջները

Անվտանգության չափանիշը	Անվտանգության պահանջների նշանակությունը
Կայունությունը	<p>Տախտակամածով փոքրաչափ նավերի համար, որոնք հաշվարկված են 0-III կատեգորիաների բարդության շրջաններում եւ 1-4 տարակարգերի IV կատեգորիայի բարդության շրջաններում նավարկելու համար, պետք է կատարվեն հետևյալ պահանջները.</p> <p>ա) լայնական ստատիկ կայունության դիագրամի բազուկը կողաթեքման 30 աստիճան կամ ավելի անկյան դեպքում պետք է լինի 0,25 մետրից ոչ պակաս այն փոքրաչափ նավերի համար, որոնք հաշվարկված են 1-ին եւ 2-րդ տարակարգերի IV կատեգորիայի բարդության շրջաններում նավարկության համար, եւ 0,2 մետրից ոչ պակաս այն փոքրաչափ նավերի համար, որոնք հաշվարկված են 3-րդ եւ 4-րդ տարակարգերի IV կատեգորիայի բարդության շրջաններում նավարկության համար.</p> <p>բ) լայնական ստատիկ կայունության դիագրամի առավելագույնը պետք է ապահովվի փոքրաչափ նավերի կողաթեքման 25 աստիճանից ոչ պակաս անկյան դեպքում.</p> <p>գ) փոքրաչափ նավերի լայնական ստատիկ կայունության դիագրամի գլոցման անկյունը պետք է լինի 60 աստիճանից ոչ պակաս.</p> <p>դ) տախտակամածով եւ անտախտակամած փոքրաչափ նավերի սկզբնական լայնական մետակենտրոնային բարձրությունը բեռնման բոլոր տարբերակների դեպքում, բացառությամբ դատարկ փոքրաչափ նավերի, պետք է լինի 0,5 մետրից ոչ պակաս:</p>
Անսուզելիություն	<p>ա) սուզման ընթացքում փոքրաչափ նավերը պետք է պահպանեն լողունության եւ կայունության դրական պաշար.</p> <p>բ) այն փոքրաչափ նավերը, որոնց իրանը բաժանվում է հատվածամասերի, եւ որոնք ունեն այնպիսի ջրատարողություն, որը հավասար է ամբողջական ջրատարողության եւ ջրով լցված վիճակում (վթարային ջրասուզման դեպքում) փոքրաչափ նավի</p>

	<p>վրա տեղավորման համար նախատեսված քանակությամբ մարդկանց կշռի տարբերությանը, հանդարտ ջրի վրա պետք է ունենան՝</p> <p>լողունության պաշար, որը թույլ է տալիս փոքրաչափս նավերին մնալ ջրի երեսին, ինչպես նաեւ լողունության ավելցուկային պաշար, որը կազմում է ամբողջական ջրատարողության 40 տոկոսից ոչ պակաս, ընդ որում, տախտակամածի կողեգրը կամ միջնամասի ողնակողի վրայի վերնեգրը չպետք է մտնեն ջրի մեջ.</p> <p>լողունության պաշար, որը թույլ է տալիս փոքրաչափս նավերին մնալ ջրի երեսին ցանկացած մեկ հատվածամասի ջրասուզման դեպքում, ընդ որում, վթարային ջրագիծը չպետք է հատի սուզման սահմանագիծը, որը պետք է անցնի տախտակամածից կամ բաց անցքերից 75 միլիմետրից ոչ պակաս ցածրության վրա:</p> <p>Վերոնշյալ փոքրաչափս նավերն ամբողջական բեռնման դեպքում ցանկացած մեկ հատվածամասի վնասման պարագայում պետք է պահպանեն դրական լողունություն:</p> <p>Ամբողջովին ջրասուզված փոքրաչափս նավերը՝ դրանց սարքավորումների ամբողջական լրակազմով , շարժիչով, վառելիքի ամբողջական պաշարով եւ մարդկանց քանակությամբ, պետք է պահպանեն դրական լողունություն եւ կայունություն:</p> <p>գ) փչովի փոքրաչափս նավերը պետք է բաժանված լինեն լողունության երկուսից ոչ պակաս բաժանմունքների:</p> <p>Փչովի փոքրաչափս նավերն ամբողջական բեռնման ժամանակ, ցանկացած մեկ բաժանմունքի վնասման դեպքում պետք է պահպանեն դրական լողունություն:</p> <p>ե) անտախտակամած փոքրաչափս նավերը պետք է լինեն անսուզելի՝ ջրով լցված վիճակում, ամբողջական բնութագրիչ բեռնվածքի պայմաններում:</p> <p>Բոլոր փոքրաչափս նավերի համար նախագծողի կողմից (փոքրաչափս նավի շինարարի կողմից) պետք է նշանակված լինի վերջրյա կողեգրի ամենացածր այնպիսի բարձրություն, որը բավարարում է այդ փոքրաչափս նավերի ամրության, լողունության, կայունության եւ անջրասուզելիության պահանջները՝ հաշվի առնելով նավարկության թույլատրելի շրջանների քանու եւ այլքային ռեժիմները:</p>
Շարժունակություն	<p>Ինքնագնաց ջրատարողական փոքրաչափս նավի շարժունակությունը պետք է համապատասխանի հետեւյալ ցուցանիշներին.</p> <p>ա) հանդարտ ջրում փոքրաչափս նավի շրջադարձի ժամանակ կայունացած շրջապտույտի տրամագծի եւ փոքրաչափս նավի երկարության հարաբերությունը պետք է լինի</p>

	<p>2-ից ոչ ավել.</p> <p>բ) հանդարտ ջրում փոքրաչափս նավի ընթացքի ժամանակ ղեկի վերադարձման զրոյական անկյան դեպքում կայունացած շրջապտույտի տրամագիծը պետք է կազմի փոքրաչափս նավի երկարության տասնապատիկից ոչ պակաս, կամ փոքրաչափս նավը պետք է շարունակի շարժումն ուղիղ ընթացքով.</p> <p>գ) փոքրաչափս նավը պետք է դուրս բերվի ղեկի վերադարձման 20 աստիճան անկյան դեպքում կատարվող կայունացած շրջապտույտից, կառավարման գլխավոր միջոցների գործադրմամբ շարժիչների կանգառքից հետո՝ առանց գետնավարման սարքվածքի օգտագործման.</p> <p>դ) փոքրաչափս նավի արգելակային ուղին լրիվ հետընթաց շարժման օգնությամբ արգելակման փորձարկումներն իրականացնելու ժամանակ չպետք է գերազանցի փոքրաչափս նավի երկարության տասնհինգապատիկը.</p> <p>ե) փոքրաչափս նավի շարժումը, տրված ուղիղ ուղղությամբ շարժասարքերի պտտման անվանական հաճախականությամբ, պետք է հնարավոր լինի քամու այնպիսի արագության դեպքում, որը կազմում է՝ վայրկյանում 19 մետրից ոչ պակաս՝ ավազաններում, որտեղ մեկտոկոսային ապահովվածությամբ ալիքն ունի 2,0 մետր բարձրություն եւ երեքտոկոսային ապահովվածությամբ ալիքն ունի 3,0 մետր եւ ավելի բարձրություն, եւ վայրկյանում 14 մետրից ոչ պակաս՝ ավազաններում, որտեղ մեկտոկոսային ապահովվածությամբ ալիքն ունի մինչեւ 1,2 մետր բարձրություն:</p>
<p>Պաշտպանակներ (նավակողի ելուն կամ լեերային սարքվածք), բռնածողեր, անցակամրջակներ, ելարանային սանդուղքներ</p>	<p>0-III կատեգորիաների բարդության շրջաններում նավարկելու համար հաշվարկված՝ 6 մետր եւ ավելի երկարությամբ փոքրաչափս նավի բաց վերին աշխատանքային տախտակամածը պետք է պատասպարված լինի ռելինգներ ունեցող ամբողջական լեերային պաշտպանակներով կամ նավակողի ելուններով: Պաշտպանակները պետք է դիմանան դրանց շահագործման ընթացքում առաջացող բեռնվածքներին: Պաշտպանակների միացման եւ ամրացման համար նախատեսված սարքվածքները պետք է պատրաստված լինեն այնպես, որ չթուլանան թրթռումից: Եթե լեերային պաշտպանակների ընդհանուր գիծն ընդհատվում է կողեզրային կամ նավախելային անցումներով, այդ անցումները պետք է ապահովված լինեն հուսալի փակումներով:</p> <p>0 - III կատեգորիաների բարդության շրջաններում նավարկության համար նախատեսված անտախտակամած փոքրաչափս նավերը պետք է սարքավորված լինեն հենակ-ռելինգով՝ 1000 միլիմետրից ոչ պակաս բարձրությամբ, տեղակայված փոքրաչափս նավի քթամասային հատվածում:</p> <p>0 - III կատեգորիաների բարդության շրջաններում</p>

Նավարկության համար հաշվարկված՝ նավասահման ռեժիմում երթելու նախատեսող անտախտակամաձ փոքրաչափս նավերը մարդկանց նստատեղերի շրջանում պետք է սարքավորված լինեն ոտքերի համար ասպանդակներով եւ ձեռքերի համար բռնակներով:

Վերնակառույցները, ղեկախցիկները, նավասանդուղքները, փողանցքները, միջանցքները, ներքին սրահները պետք է սարքավորված լինեն բռնակներով՝ փոքրաչափս նավի իրանի ներսից եւ դրսից, այնտեղ, որտեղ դրանք անհրաժեշտ են անբարենպաստ ջրաօդերեութաբանական պայմաններում մարդկանց անվտանգ գտնվելու, տեղաշարժման եւ աշխատանքի ապահովման համար:

Աշխատանքային տախտակամաձի մակերեսային չպետք է լինի սահուն: Վերին տախտակամաձի վրա տեղակայված ելանցքների կափարիչների մակերեսայինները եւ ղեկախցիկների եզրապատերի եւ քոկախտների թեք մակերեսայինները պետք է ունենան հակասահուն հատկանիշներ:

Օ - III կատեգորիաների բարդության շրջաններում նավարկության համար հաշվարկված փոքրաչափս նավերի վրա պետք է նախատեսված լինի դրսի կախովի նավասանդուղք կամ 40-45 միլիմետրից ոչ մեծ անցքերով ցանց, որն իջնում է 600 միլիմետրից ոչ ավել խորության վրա՝ դատարկ փոքրաչափս նավի ջրագծից հաշված: Այն դեպքերում, երբ անհնարին է փոքրաչափս նավի վրա նավասանդուղքի կամ ցանցի օգտագործումը, պետք է նախատեսվի այլ՝ ոչ պակաս արդյունավետ միջոց, որն ապահովում է ջրից անգիտակից վիճակում գտնվող մարդուն հանելը:

Փոքրաչափս բազմիրան նավերի իրանները միացնող կամրջակի (կամրջակների) քթամասային եւ նավախելային եզրերի միջեւ նվազագույն հեռավորությունը պետք է լինի տվյալ կամրջակով (կամրջակներով) միացվող իրաններից փոքրագույնի երկարության 0,5-ից ոչ պակաս:

Բոլոր նավային սանդուղքները (ելարանները), որոնք նախատեսված են փոքրաչափս նավի վրա բարձրանալու, տախտակամաձ դուրս գալու, սրահների, հարթակների եւ կամրջակների միջեւ հաղորդակցվելու, սարքավորումներին մուտքի հնարավորություն ունենալու համար, պետք է լինեն օգտագործման ժամանակ հարմար եւ անվտանգ:

Սանդղակայինների միջեւ չափված թեք նավասանդուղքների լայնությունը պետք է լինի 500 միլիմետրից ոչ պակաս, նավասանդուղքի թեքության անկյունը՝ 65 աստիճանից ոչ ավել, աստիճանների բարձրությունը՝ 255 միլիմետրից ոչ ավել եւ 180 միլիմետրից ոչ պակաս:

Թեք նավասանդուղքները պետք է սարքավորված լինեն

	<p>հարթ բռնածողերով՝ 25 միլիմետրից ոչ պակաս տրամագծով (հաստությամբ) եւ 900 միլիմետրից ոչ պակաս բարձրությամբ:</p> <p>Սանդղակալների միջեւ չափված ուղղահայաց նավասանդուղքների լայնությունը պետք է լինի 300 միլիմետրից ոչ պակաս, աստիճանների միջեւ հեռավորությունը՝ 280 միլիմետրից ոչ պակաս եւ 320 միլիմետրից ոչ ավել:</p> <p>Հեռավորությունն ուղղահայաց նավասանդուղքից մինչեւ դրա հետեւում տեղակայված կոնստրուկցիաները պետք է լինի 150 միլիմետրից ոչ պակաս, իսկ բռնածողերի միջեւ հեռավորությունը (դրանց առկայության դեպքում)՝ 500 միլիմետրից ոչ պակաս:</p> <p>Բռնակասանդուղքների բռնակները պետք է ունենան թեթեակի գոգավոր (իջեցված) հենարանային մակերեսայթ՝ 250 միլիմետրից ոչ պակաս լայնությամբ: Դրանց միջեւ հեռավորությունը չպետք է գերազանցի 350 միլիմետրը, իսկ բռնակի եւ ամրացման մակերեսայթի միջեւ հեռավորությունը՝ 150 միլիմետրից ոչ պակաս:</p> <p>12 մետրից պակաս երկարությամբ փոքրաչափս նավերի վրա թույլատրվում է բռնածողի տեղադրումը վերնակառույցի կամ ղեկախցիկի պարագծով:</p> <p>Մարդկանց տեղավորման եւ հանգստի համար նախատեսված վերնակառույցների եւ ղեկախցիկների բաց տախտակամածների առանձին գոտիները (արեային գոտիները) պետք է ունենան հավելյալ պաշտպանակներ կամ ապահովեն մարդու հուսալի սեւեռակումը անշարժ դիրքում՝ փոքրաչափս նավի երթելեկության ժամանակ:</p>
<p>Ցամաքեցման համակարգ (ցամաքեցման միջոցներ)</p>	<p>Ցամաքեցման համակարգը (ցամաքեցման միջոցները) պետք է կազմված լինի՝</p> <p>ա) 6 մետրից պակաս երկարությամբ փոքրաչափս նավերի վրա՝ մեկ ցամաքեցման միջոցից.</p> <p>բ) 0 - III կատեգորիաների բարդության ծովային շրջաններում նավարկության համար նախատեսված՝ 6 եւ ավելի մետր երկարությամբ տախտակամածով փոքրաչափս նավերի վրա՝ 2 պոմպերից:</p> <p>Պոմպերից մեկը պետք է տեղադրվի ոչ շարժական ձեւով՝ քոկպիտի շրջանում կամ վերին տախտակամածի վրա, իսկ երկրորդը՝ փոքրաչափս նավի ներքին սրահներում՝ մուտքի նավասանդուղքի շրջանում:</p> <p>Պոմպերից յուրաքանչյուրը պետք է ունենա արտադրողականություն՝ հետեւյալից ոչ պակաս՝</p> <p>ա) 3,4 խորանարդ մետր ժամում՝ մինչեւ 15 խորանարդ մետր ջրատարողությամբ փոքրաչափս նավերի համար.</p> <p>բ) 4 խորանարդ մետր ժամում՝ 15-ից մինչեւ 26 խորանարդ մետր ջրատարողությամբ փոքրաչափս նավերի համար.</p>

	<p>գ) 6 խորանարդ մետր ժամում՝ 26-ից մինչև 35 խորանարդ մետր ջրատարողությամբ փոքրաչափ նավերի համար.</p> <p>դ) 8 խորանարդ մետր ժամում՝ 35 խորանարդ մետրից ավելի ջրատարողությամբ փոքրաչափ նավերի համար.</p> <p>IV կատեգորիայի բարդության շրջաններում նավարկման համար հաշվարկված՝ 6 մետր եւ ավելի երկարությամբ տախտակամածով փոքրաչափ նավերի վրա պետք է նախատեսվի ցամաքեցման համակարգ՝ կախված նավարկության տարակարգից՝</p> <p>ա) նավարկության 1-ին տարակարգի դեպքում ցամաքեցման համակարգը պետք է պարունակի մեխանիկական շարժաբերով մեկ պոմպից ոչ պակաս եւ ձեռքի շարժաբերով մեկ պոմպ.</p> <p>բ) նավարկության 2-րդ տարակարգի դեպքում ցամաքեցման համակարգը պետք է պարունակի ձեռքի շարժաբերով երկու պոմպից ոչ պակաս, որոնցից մեկը կարող է լինի շարժական.</p> <p>գ) նավարկության 3-5-րդ տարակարգերի դեպքում ցամաքեցման համակարգը պետք է պարունակի ձեռքի շարժաբերով մեկ պոմպից ոչ պակաս , ընդ որում, 4-րդ եւ 5-րդ տարակարգերի նավերի վրա պոմպը կարող է լինել շարժական:</p> <p>Ոչ ինքնագնաց փոքրաչափ նավերը, որոնք շահագործվում են առանց անձնակազմի, կարող են չսարքավորվել պոմպերով: Այդ դեպքում ցամաքեցման համակարգը պետք է նախատեսի այլ նավի ցամաքեցման միջոցների օգտագործման հնարավորությունը:</p> <p>Ցամաքեցման համակարգի ներծծող խողովակաուստերը պետք է ապահովեն դրանց աշխատունակությունը փոքրաչափ նավի մինչև 10 աստիճան կողաթեքման դեպքում, իսկ արտաքին թիթեղվածքում ընդունման եւ հետհոսքի անցքերը բացառեն իրանից ներս ջրի պատահական ներթափանցման հնարավորությունը:</p> <p>Արմատուրի կառավարման շարժաբերերը պետք է տեղադրվեն հեշտ հասանելի վայրերում եւ ապահովված լինեն կափույրի վիճակը ցույց տվող (բաց է- փակ է) սարքվածքով, իսկ հեռակառավարվող արմատուրը պետք է ունենա կրկնակիչ ձեռքի կառավարում:</p>
<p>Էլեկտրական սարքավորումներ</p>	<p>Էլեկտրական էներգիայի հիմնական աղբյուր, որն ունի փոքրաչափ նավի նախագծով նախատեսված առավելագույն բեռնվածքի ռեժիմում փոքրաչափ նավի բոլոր սարքվածքների եւ համակարգերի սնուցման համար բավարար հզորություն, եւ ինքնավար վթարային աղբյուր (ուժահավաքիչ մարտկոցներ):</p> <p>Ուժահավաքիչ մարտկոցների հզորությունը պետք է բավարար լինի վթարային ռեժիմում պահանջվող սպառողների</p>

սնուցման համար:

Այն դեպքերում, երբ փոքրաչափս նավի ուժահավաքիչ մարտկոցն օգտագործվում է միաժամանակ ներքին այրման հիմնական շարժիչների գործարկման համար, դրա տարողությունը պետք է բավարար լինի առնվազն ներքին այրման հիմնական շարժիչների 10 գործարկում իրականացման համար:

Անվանական լարումները նավային ցանցի սնուցման համար էլեկտրական էներգիայի աղբյուրների արտանցիչներում չպետք է գերազանցեն հետևյալ նշանակությունները.

ա) 50 Հերց հաճախականությամբ փոփոխական միաֆազ հոսանքի դեպքում՝ 230 վոլտը.

բ) հաստատուն հոսանքի դեպքում՝ 24 վոլտը:

24 վոլտից ավելի լարմամբ հաստատուն հոսանքի աղբյուրների տեղադրումը փոքրաչափս նավի վրա թույլատրվում է մեկուսացման դիմադրության անընդհատ ավտոմատ հսկողության սարքվածքի տեղադրման դեպքում: Այն սրահում, որտեղ գտնվում են 24 վոլտից ավել լարմամբ հոսանքի աղբյուրներ, չպետք է լինեն հարակից բոցավառելի հեղուկներ պարունակող տարողություններ:

Էլեկտրական սարքավորումները չպետք է հանդիսանան վնասակար ճառագայթումների եւ թունավոր նյութերի անջատման աղբյուր:

Էլեկտրական էներգիայի բաշխման սնուցման համակարգի կառուցվածքային կատարումը պետք է լինի այնպիսին, որ էլեկտրական ցանցում կարճ միակցման դեպքում բացառի վտանգավոր լարման առաջացումը:

Էլեկտրաէներգիայի արտաքին աղբյուրից նավային համակարգի սնուցման ապահովման համար փոքրաչափս նավի վրա պետք է տեղակայված լինի սնուցման վահան, որի վրա նախատեսվում է՝ արտաքին աղբյուրից ճկուն մալուխի միացման եւ չեզոք հաղորդալարի հողանցման համար համապատասխան սեղմակների առկայություն, վոլտմետր կամ սեղմակների վրա լարման առկայության այլ ազդանշան եւ ցուցանակ՝ հոսանքի լարման, տեսակի եւ հաճախականության նշումով:

Տախտակամածի վրա տեղադրված (անտախտակամած նավերի վրա՝ իրանի մեջ) մալուխները, ազդանշանային տարբերիչ լապտերները, լուսատուները, խցակային հարակցիչները եւ անջատիչները, որոնք տեղադրված են տախտակամածի վրա, պետք է ունենան ջրապաշտպանիչ կառուցվածք:

Փոքրաչափս նավերի վրա պետք է կիրառվեն լարմանը համապատասխանող՝ չայրվող եւ այրումը չտարածող պղնձե ջղերով մալուխներ: Անկացման տեղերում, որտեղ հնարավոր են

	<p>մեխանիկական վնասվածքներ կամ նավթամթերքների (էլեկտրոլիտի) ազդեցություն, կիրառվում են համապատասխան պաշտպանությամբ մալուխներ:</p> <p>Մալուխային անցումները չպետք է խախտեն միջնորմերի անջրանցիկությունը:</p>
<p>Վառելիքային համակարգ</p>	<p>Լցնող վառելիքային խողովակաշարերը պետք է հասցվեն մինչեւ ցիստեռնի հատակը՝ նվազագույն բացակով:</p> <p>Փոքրաչափս նավի վրա չի թույլատրվում անհամատեղելի վառելիքների եւ յուղերի նույն խողովակաշարով վերամղումը եւ պահպանումը հեղուկամբարում:</p> <p>Փոքրաչափս նավի վրա վառելիքների եւ յուղերի վերամղման (սպառման) տեխնոլոգիական գործողությունները պետք է համապատասխանեն դրա կայունության եւ անսուզելիության ապահովման պահանջներին:</p> <p>Շարժիչի վառելիքային համակարգի բոլոր հանգույցները անհրաժեշտ է տեղադրել թողարկիչ կոլեկտորի հակառակ կողմում: Կարբյուրատորի ներծծող խողովակը պետք է դուրս հանվի հանովի պատյանի սահմաններից, եւ գտնվի դրանից 500 միլիմետրից ոչ պակաս բարձրության վրա: Ներծծող խողովակի ծայրին պետք է տեղադրված լինի բոցն ընդհատող արմատուր: Վառելիքի եւ յուղի բոլոր խողովակաշարերը եւ արմատուրը պետք է լինեն հերմետիկ:</p>

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 3

«Փոքրաչափ նավերի անվտանգության
մասին» Մաքսային միության
տեխնիկական կանոնակարգի

Փոքրաչափ նավերի նավարկության շրջանները

Համարը՝ ը/կ	Նավարկության շրջանները	Ջրաօդերեւութաբանական պայմանների բնութագիրը	Ապաստարանատեղերից կամ ափից հեռացվածությունը, ծովային մղոն	Փոքրաչափ նավի տիպը, տեսակը
1	«Օ» կատեգորիայի բարդության	պահանջներ չեն ներկայացվում	պահանջներ չեն ներկայացվում	տախտակամածով նավ, որը, ըստ նախագծային եւ շահագործման փաստաթղթերի, չունի նավարկության պայմանների սահմանափակումներ
2	I կատեգորիայի բարդության	ծովային շրջան՝ մինչեւ 8,5 մետր բարձրությամբ երեքտոկոսային ապահովվածությամբ ալիքով	200-ից ոչ ավելի	տախտակամածով նավ
3	II կատեգորիայի բարդության	ծովային շրջան՝ մինչեւ 7 մետր բարձրությամբ երեքտոկոսային ապահովվածությամբ ալիքով	100-ից ոչ ավելի	տախտակամածով նավ
4	III կատեգորիայի բարդության	ծովային շրջան՝ մինչեւ 3,5 մետր բարձրությամբ երեքտոկոսային ապահովվածությամբ ալիքով	50-ից ոչ ավելի	տախտակամածով նավ
5	IV կատեգորիայի բարդության I տարակարգի	ծովային շրջան կամ ներքին ջրավազան՝ մինչեւ 3,0 մետր բարձրությամբ երեքտոկոսային ապահովվածությամբ ալիքով	20-ից ոչ ավելի	տախտակամածով նավ

Համարը՝ ը/կ	Նավարկության շրջանները	Ջրաօդերեւութաբանական պայմանների բնութագիրը	Ապաստարանատեղերից կամ ավից հեռացվածությունը, ծովային մղոն	Փոքրաչափ նավի տիպը, տեսակը
	II տարակարգի	ծովային շրջան կամ ներքին ջրավազան՝ մինչեւ 2,0 մետր բարձրությամբ մեկտոկոսային ապահովվածությամբ ալիքով	12-ից ոչ ավելի	տախտակամածով նավ
	III տարակարգի	ծովային շրջան կամ ներքին ջրավազան՝ մինչեւ 1,2 մետր բարձրությամբ մեկտոկոսային ապահովվածությամբ ալիքով	6-ից ոչ ավելի	տախտակամածով նավ
			2,7-ից ոչ ավելի	անտախտակամած նավ
	IV տարակարգի	ծովային շրջան կամ ներքին ջրավազան՝ 0,6 մետր բարձրությամբ մեկտոկոսային ապահովվածությամբ ալիքով	2,7-ից ոչ ավելի	տախտակամածով նավ
			1,6-ից ոչ ավելի	անտախտակամած նավ
	V տարակարգի	ծովային շրջան կամ ներքին ջրավազան՝ մինչեւ 0,25 մետր բարձրությամբ մեկտոկոսային ապահովվածությամբ ալիքով	0,27-ից ոչ ավելի	տախտակամածով եւ անտախտակամած նավ

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 4

«Փոքրաչափս նավերի անվտանգության
մասին» Մաքսային միության
տեխնիկական կանոնակարգի

Փոքրաչափս նավերի ռադիոսարքավորումների ցանկը

Համարը՝ ը/կ	Նավահանգստից, ապաստարանատեղից կամ ափից առավելագույն հեռացվածություն, մղոններ (կիլոմետրեր)	Նավարկման շրջանների բարդության կատեգորիան, ավազանների տարակարգերը	Կապի միջոցներ		Ծանոթագրություններ
			ԳԿԱ	ԸԱ/ԿԱ/ արբանյակային ռադիոհեռախոս	
1	Սահմանափակված չէ	0	+	+	
2	200-ից ոչ ավելի	I	+	+	
3	100-ից ոչ ավելի	II	+	+	
4	50-ից ոչ ավելի	III	+	-	
5	50	IV	+	-	օրվա ցերեկային ժամերին
6	12	1	+	-	տախտակամածով նավեր
7	6	2	(+)	-	տախտակամածով նավեր
8	2,5 (5)	3	(+)	-	տախտակամածով նավեր
9	1,5 (3)	4	(+)	-	տախտակամածով նավեր
10	0,3 (0,5)	5	(+)	-	տախտակամածով նավեր

Ծանոթագրություններ. 3, 4, 5 տարակարգերի ավազաններում լրդալու համար հաշվարկված փոքրաչափս նավերի վրա թույլատրելի է ավելի փոքր հզորության ռադիոկայանների տեղադրումը.

+ - նշված սարքավորումների տեղադրումը պարտադիր է.

(+) նշված սարքավորումների տեղադրումը խորհուրդ է տրվում:

0, I, II կատեգորիաների բարդության նավարկության շրջանների յուրաքանչյուր նավ պետք է ունենա նավային ռադիոտեղորոշման կայան (ՆՌԿ)՝ նավագնացական իրադրության հսկման եւ նավարկման ժամանակահատվածում փոքրաչափս նավի անվտանգության ապահովման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 5

«Փոքրաչափս նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի

Նավարկության ծովային շրջանների փոքրաչափս նավերի փրկարար եւ ազդանշանային միջոցների մատակարարման նորմերը

Համարը՝ ը/կ	Փրկարար եւ ազդանշանային միջոցների անվանումները	Նավի նավարկման շրջանի բարդության կատեգորիան				
		IV	III	II	I	0
		Հեռացվածությունը (ծովային մղոններով) օրվա ցերեկային ժամերին				
		կայանատեղ բազայից	ապաստարանատեղից			
		մինչեւ 12	մինչեւ 50	մինչեւ 100	մինչեւ 200	200-ից ավելի

1	2	3	4	5	6	7
1	Փրկարար լաստ	Միաիրան նավերի համար՝ չի պահանջվում: Բազմաիրանների համար՝ տես Ծանոթագրությունը		այո		
2	Փրկաշրջաններ	Փոքրաչափս նավի վրա մինչեւ 8 մարդկանց ընդհանուր քանակի դեպքում՝ 2 շրջան				
		Փոքրաչափս նավի վրա մինչեւ 12 մարդկանց ընդհանուր քանակի դեպքում՝ 3 շրջան				
3	Փրկաշրջանի վրայի որոնման կրակ	1 հատ՝ նշաձողին չմիացված փրկաշրջանի վրա				
	Փրկաշրջանների լողուն խարիսխներ	1 հատ՝ նշաձողին միացված փրկաշրջանի վրա				
4	Շրջանների ազդանշանային նշաձողեր	Չի պահանջվում	1 հատ՝ միայն առագաստաշարժիչային նավերի համար, ազդանշանային կրակի կամ դրոշակի բարձրությունը ջրի մակերեսույթից՝ 1,8 մետրից ոչ պակաս			
5	Փրկաշրջանների պարանները	1-2 հատ՝ 20 մետրից ոչ պակաս երկարությամբ, առանց նշաձող փրկաշրջանների համար				

1	2	3	4	5	6	7
6	Փրկաբաճկոնակներ	Մեկական բաճկոնակ՝ փոքրաչափ նավի վրա գտնվող յուրաքանչյուր մարդու				
7	Օդապարիկային հրթիռներ					
	Սպիտակ	0	4	4	6	12
	Կարմիր	3	6	6	6	12
8	Ծխային ազդանշաններ լողուն (լանիկներ)	0	2	2	2	3
9	Ջերմապաշտպան միջոցներ՝	Նավի վրա գտնվող յուրաքանչյուր մարդու				
10	Հրատեխնիկական ազդանշանային լույսեր (ֆալշեյերներ)					
	Սպիտակ	4	4	4	4	4
	Կարմիր	4	4	4	4	4
11	Ռադիոազդալողան ԿՕՍՊԱՍ- ՍԱՐՍԱՏ (EPIRB)	2ի պահանջվում			1 լրակազմ	
12	Ապահովական հեծելասարք		Թիմի անդամներից յուրաքանչյուրին՝ մեկական լրակազմ՝ երկու ապահովական ծայրերով 1,5 մետրից ոչ պակաս երկարությամբ եւ քրոչստրոպով (ոտքերի միջեւ անցնող առասանով)			

Ծանոթագրություն. այն բազմակորպուսային նավերի համար, որոնց կայմը (կայմերը) հանդիսանում է նավի իրանի կառուցվածքի կրող տարրը, փրկարար լաստի առկայությունը պարտադիր է:

Ներքին ջրային ուղիներում շահագործվող փոքրաչափ նավերի փրկաշրջաններով մատակարարման նորմերը

Փոքրաչափ նավի երկարությունը L, մետր	Փրկաշրջանների քանակը, հատ այդ թվում՝		
	Ընդամենը	ինքնավառ ազդալողանով	
		ինքնավառ ազդալողանով	փրկապարանով
<12	1 ¹	-	1
12 < L < 20	2	1	1

¹Փոքրաչափ նավի 6 մետրից պակաս երկարության դեպքում թույլատրվում է

փրկաշրջանը փոխարինել օղակ ունեցող փրկապարանով

Ներքին ջրային ուղիներում շահագործվող փոքրաչափա նավերի փրկարար միջոցները

Նավարկման շրջանի տարակարգը	Փոքրաչափա նավի երկարությունը L, մետր	Փրկարար միջոցներով ապահովվող մարդկանց քանակը, %	
		լաստերով	բաճկոնակներով
1	2	3	4
1	< 12	50	100
	12 < L < 20	100	100
2	< 12	-	100
	12 < L < 20	50	100
3	< 12	-	100
4	12 < L < 20	-	100
5	< 12	-	100 ¹
	12 < L < 20	-	100 ¹
¹ Թույլատրվում է փրկաբաճկոնակների փոխարեն փրկարար լանջափոկերի օգտագործումը			

Ներքին ջրային ուղիներում շահագործվող փոքրաչափա նավերի՝ ազդանշանային հրատեխնիկական միջոցներով մատակարարման նորմերը

Նավի կատեգորիան	Հրթիռներ՝ աղետի ազդանշանի օդապարիկային նավային, հատ	Հրատեխնիկական ազդանշանային լույսեր (ֆալշֆեյերներ) կարմիր, հատ
1	6	6
2	3	3
3, 4, 5	-	-

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 6

«Փոքրաչափս նավերի անվտանգության
մասին» Մաքսային միության
տեխնիկական կանոնակարգի

**Փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների
նույնականացման անցկացման կարգը**

1. Փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների նույնականացնումն անցկացվում է այն դեպքերում, երբ որոշակի օբյեկտի մասին տեղեկություններում ներկայացված է դրա ոչ լրիվ նկարագիրը, կամ անհրաժեշտ է նկարագրի արժանահավատության հավաստում:

2. Կախված նույնականացման խնդիրներից եւ նույնականացվող փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների յուրահատկությունից՝ օգտագործվում են հետեւյալ ընթացակարգերը.

ա) փաստաթղթերի փորձաքննություն.

բ) նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների փորձարկումներ.

գ) փաստաթղթերի փորձաքննություն եւ նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների փորձարկումներ:

3. Փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների՝ փաստաթղթերի փորձաքննության միջոցով նույնականացման դեպքում նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների՝ հայտարարված տեսակին, որոշակի տիպին եւ մակնիշին պատկանելության սահմանման համար անցկացվում է ուղեկցող փաստաթղթերի, փոքրաչափս նավի շինարարի այլ փաստաթղթերի ուսումնասիրություն եւ դրանց համեմատումը փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների արտաքին տեսքի, դրանց մակնշման հետ, այդ թվում նաեւ

տրանսպորտային տարայի վրա: Ընդ որում, իրականացվում է գործողությունների հետեւյալ հաջորդականությունը.

ա) սահմանվում է որոշակի տեսակի փոքրաչափս նավերի, փրկարար միջոցի եւ (կամ) սարքավորումների պատկանելիությունը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի կարգավորման օբյեկտ հանդիսացող փոքրաչափս նավերին, փրկարար միջոցներին եւ (կամ) սարքավորումներին.

բ) համեմատվում են փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների գրանցման եւ տեխնիկական փաստաթղթերում եւ (կամ) մակնշման մեջ նշված տվյալները որոշակի տեսակի փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների փաստացի տվյալների հետ:

Փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների համար ստուգվում են՝

ա) փոքրաչափս նավի, փրկարար միջոցի եւ (կամ) սարքավորումների անվանումը, տեսակը, մոդելը, մոդիֆիկացիան.

բ) փոքրաչափս նավի, փրկարար միջոցի եւ (կամ) սարքավորումների արտադրողի (շինարարի) անվանումը կամ դրա ծագման տվյալները, արտադրման ամսաթիվը.

գ) տեխնիկական պայմանները կամ այլ փաստաթուղթ, որով թողարկվում են փոքրաչափս նավը, փրկարար միջոցները եւ (կամ) սարքավորումները.

դ) ուղեկցող փաստաթղթերում նշված տեղեկություններ:

4. Փաստաթղթերի փորձաքննությունից ստացված տեղեկության անբավարարության, ինչպես նաեւ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների համապատասխանության գնահատման դեպքում անցկացվում են փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների (եթե դա կիրառելի է տվյալ տեսակի փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների նկատմամբ) փորձարկումներ՝

համաձայն փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների մակնշմամբ եւ ուղեկցող փաստաթղթերով սահմանված չափանիշների: Նույնականացումն անցկացնող մարմինը յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանում է նույնականացման ստուգվող ցուցանիշների քանակը՝ կախված փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների տեսակից:

Նույնականացման ցուցանիշների որոշման ժամանակ օգտագործվում են չափումների իրականացման ատեստավորված մեթոդիկաներ, որոնք ապահովում են փորձարկումների արդյունքների անկողմնակալությունը եւ արժանահավատությունը:

5. Նույնականացումն անցկացնող մարմինը վերլուծում է փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների նույնականացման արդյունքները եւ ձեւակերպում է դրանք նույնականացման արձանագրության տեսքով:

Նույնականացման արձանագրությունը պարունակում է հետեւյալ տեղեկությունները.

ա) նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցի եւ (կամ) սարքավորման արտադրողի (փոքրաչափս նավի շինարարի) մասին տեղեկություն՝ իրավաբանական հասցեի եւ վավերապայմանների նշմամբ.

բ) նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցի եւ (կամ) սարքավորման անվանումը, դասակարգման խմբավորումներին դասվելը.

գ) նույնականացման համար անհրաժեշտ նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցի եւ (կամ) սարքավորման մասին տեղեկությունները.

դ) արտադրման ամսաթիվը, ծառայության եւ (կամ) պահպանման ժամկետը, մակնշումը (առկայության դեպքում).

ե) արդյունքները (առկայության դեպքում)՝ հավատարմագրված փորձարարական լաբորատորիայում (կենտրոնում).

զ) փաթեթվածքի մասին տեղեկությունները (առկայության դեպքում)։

է) մակնշման գնահատման արդյունքը։

ը) նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների նորմատիվ կամ տեխնիկական փաստաթղթի (առկայության դեպքում) կամ փոքրաչափս նավի, փրկարար միջոցի եւ (կամ) սարքավորման նկարագիրը (մատակարարման պայմանագիրը, որակի սերտիֆիկատը, փոքրաչափս նավի անվտանգության ցուցանիշները հավաստող փաստաթուղթը, մասնագրերը) պարունակող այլ փաստաթղթի անվանումը, ներմուծված արտադրանքի տեխնիկական նկարագիրը կամ հայրենական փաստաթղթերի նմանակների առկայության մասին տեղեկությունները։

թ) լրացուցիչ փորձարկումների անցկացման մասին եզրակացությունը (անհրաժեշտության դեպքում)։

ժ) հայտարարված անվանմանը եւ (կամ) հայտարարագրված ցուցանիշներին նույնականացվող փոքրաչափս նավի, փրկարար միջոցի եւ (կամ) սարքավորման համապատասխանության մասին եզրակացությունը։

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 7

«Փոքրաչափ նավերի անվտանգության
մասին» Մաքսային միության
տեխնիկական կանոնակարգի

Փոքրաչափ նավերի դասակարգման անցկացման կարգը

1. Փոքրաչափ նավերի դասակարգման ընթացակարգը ներառում է հետևյալ փուլերը.

տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրություն եւ համաձայնեցում.

փոքրաչափ նավերի շինարարության (պատրաստման), վերասարքավորման, վերանորոգման, արդիականացման եւ ուտիլիզացման տեխնիկական դիտարկում.

զննումներ, որոնք իրականացվում են յուրաքանչյուր փոքրաչափ նավի շահագործման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ մինչ դրա դուրսգրումը. Ջննման իրականացման կարգը եւ ժամկետները, ինչպես նաեւ շահագործման մեջ գտնվող փոքրաչափ նավերի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի ձեւերը որոշվում են Մաքսային միության մասնակից պետությունների ազգային օրենսդրությամբ.

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին փոքրաչափ նավերի համապատասխանության մասին փաստաթղթերի ձեւակերպում:

2. Տեխնիկական փաստաթղթերը մշակվում եւ ներկայացվում են փոքրաչափ նավերի դասակարգման մարմնի ուսումնասիրմանը՝ մինչեւ փոքրաչափ նավի կառուցման (պատրաստման) սկիզբը:

Այն փաստաթղթերը, որոնք ներկայացվում են փոքրաչափ նավերի դասակարգման մարմնին հայտատուի (այլ անձի) կողմից, պետք է պարունակեն

անհրաժեշտ տվյալներ՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման ստուգման համար: Եթե փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով, ապա դրանց ձեռագրերը եւ փոխանցման եղանակը համաձայնեցվում են Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի հետ՝ յուրաքանչյուրն առանձին դեպքում:

Փաստաթղթերը, որոնք ներկայացվում են ուսումնասիրման նպատակով, համարվում են գաղտնի եւ կարող են փոխանցվել երրորդ կողմին միայն դրա սեփականատիրոջ գրավոր համաձայնության դեպքում:

3. Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը քննարկում եւ համաձայնեցնում է տեխնիկական փաստաթղթերը՝ փոքրաչափս նավերի կառուցման, վերասարքավորման, արդիականացման, դրանց վրա տեղադրվելիք արտադրատեսակների պատրաստման եւ վերանորոգման եւ նյութերի պատրաստման (տեխնիկական նախագծեր, աշխատանքային փաստաթղթեր, տեխնիկական պայմաններ եւ այլ փաստաթղթեր): Սկզբունքայնորեն նոր որոշումների կիրառման դեպքում ուսումնասիրման կարող են ներկայացվել տեխնիկական առաջադրանքը, տեխնիկական առաջարկը, էսքիզային նախագիծը, ինչպես նաեւ փորձարարական-կոնստրուկտորական եւ գիտահետազոտական մշակումները: Այդպիսի փաստաթղթերը համաձայնեցման ենթակա չեն: Դրանց ուսումնասիրման արդյունքներով կազմվում է Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի նամակ-եզրակացություն (կարծիք):

4. Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի կողմից փոքրաչափս նավերի նախագծման նպատակով եւ շահագործման ժամանակ օգտագործվող տեխնիկական փաստաթղթերի եւ համակարգչային կիրառական ծրագրերի (ծրագրային արտադրանքների) համաձայնեցումն իրականացվում է գրավոր եզրակացության ձեւով:

Տեխնիկական փաստաթղթերի եւ համակարգչային կիրառական ծրագրերի (ծրագրային արտադրանքների) գործածության ժամկետը կազմում է 6 տարուց ոչ

ավելի:

5. Նախօրոք համաձայնեցված տեխնիկական փաստաթղթերում կատարվող եւ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգով նախատեսված պահանջները շոշափող փոփոխությունները համաձայնեցվում են փոքրաչափս նավերի դասակարգման մարմնի հետ:

6. Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը չի ստուգում հաշվարկների ժամանակ հաշվիչ գործառնությունների կատարման ճշգրտությունը, այդ թվում՝ իր կողմից համաձայնեցված ծրագրերով, այլ քննարկում է հաշվարկների վերջնական արդյունքները: Հաշվարկները պետք է իրականացվեն Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի հետ համաձայնեցված մեթոդիկաներով: Առանձին դեպքերում անցկացվում է հաշվարկների վերջնական արդյունքների արժանահավատության լրացուցիչ փորձաքննություն:

7. Տեխնիկական փաստաթղթերի եւ համակարգչային կիրառական ծրագրերի (ծրագրային արտադրանքների) համաձայնեցումը կարող է չեղյալ համարվել Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի կողմից հետեւյալ դեպքերում.

ա) համապատասխան փոքրաչափս նավերի նկատմամբ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված անվտանգության պահանջներում փոփոխություններ մտցնելու դեպքում.

բ) հայտատուի կողմից նախկինում համաձայնեցված տեխնիկական փաստաթղթերում եւ համակարգչային հավելումներում (ծրագրային արտադրանքներում) առանց Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի հետ համաձայնեցնելու փոփոխություններ մտցնելու դեպքում:

8. Տեխնիկական դիտարկումը ներառում է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման կանոնավոր ստուգումներ՝ փոքրաչափս նավերի կառուցման, վերասարքավորման,

արդիականացման, վերանորոգման, փոքրաչափ նավերի վրա տեղադրման համար նյութերի եւ արտադրատեսակների պատրաստման եւ վերանորոգման ընթացքում:

9. Տեխնիկական դիտարկումն իրականացվում է հետեւյալ կանոններով.

ա) ստուգումների, հետազոտությունների, չափումների եւ փորձարկումների ծավալը եւ մեթոդները սահմանվում են Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնի կողմից եւ յուրաքանչյուր դեպքում ենթակա են ճշման նախնական հայտերում՝ հաշվի առնելով արտադրման պայմանները: Հայտին կցվում է տեխնիկական կանոնակարգման եւ տեխնոլոգիական գործառնությունների օբյեկտների հսկիչ ստուգումների ցանկը, որը պարտադիր է Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմնին ներկայացնելու համար՝ շինարարի կողմից հսկողություն իրականացնելուց եւ փաստաթղթերը լրացնելուց հետո.

բ) կառուցման, վերասարքավորման, արդիականացման դեպքում Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը, փուլային ստուգումների, նավակառանման եւ ընթացային փորձարկումների (անհրաժեշտության դեպքում) արդյունքների հիման վրա, տրամադրում է դասակարգման վկայական.

գ) փոքրաչափ նավերի կառուցման, վերասարքավորման, արդիականացման կամ վերանորոգման աշխատանքներ կատարող կազմակերպությունը պետք է՝

տրամադրի աշխատանքի համար անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերը, այդ թվում՝ արտադրանքի որակի հսկողության փաստաթղթերը.

պատրաստի փոքրաչափ նավերը ստուգումների անցկացմանը.

ապահովի զննումների անցկացման անվտանգությունը.

ապահովի փոքրաչափ նավերի զննմանը ներկայացնելու համար պատասխանատու աշխատակազմի ներկայությունը.

դ) փոքրաչափս նավերի համար նյութերի եւ արտադրատեսակների պատրաստման, արդիականացման, վերանորոգման ընթացքում Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի եւ տեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանման դեպքում Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինը տրամադրում է հավանության մասին վկայական.

ե) կազմակերպության կողմից սույն կետի «գ» ենթակետով նախատեսված պահանջների չպահպանման դեպքում Մաքսային միության անդամ պետության լիազորված մարմինն իրավունք ունի հրաժարվելու տեխնիկական դիտարկման անցկացումից՝ գրավոր հիմնավորելով իր մերժումը:

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 8

«Փոքրաչափս նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի

«Փոքրաչափս նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հաստատման) ենթակա տեխնիկական կանոնակարգման օբյեկտների ցանկը

Աղյուսակ 1

Պարտադիր սերտիֆիկացման ենթակա օբյեկտների ցանկ

ը/կ	Տեխնիկական կարգավորման օբյեկտները
1.	Կատեգորիա՝ փոքրաչափս նավեր
1.1.	սերիական թողարկման փոքրաչափս նավեր՝ 6 մետրից պակաս իրանի երկարությամբ
2	Արտադրատեսակի կատեգորիա եւ փոքրաչափս նավի վրա տեղադրվող սարքավորում.
	1. Իրանում եւ նավախելային շարժաբերային շարժիչներում տեղադրվող՝ բռնկումից պաշտպանված սարքավորում: 2. Միացված կցորդման դեպքում գործարկումից պաշտպանման սարքվածքներ՝ արտաքին շարժիչների համար: 3. Ղեկային անիվներ, կառավարման մեխանիզմներ եւ մետաղաճոպաններ՝ լրակազմով: 4. Վառելիքի բաքեր եւ ճկափողեր: 5. Գործարանային պատրաստման ելանցքներ եւ լուսանցույցներ:
3	Կատեգորիա՝ փրկարար միջոցներ
	1. Փրկաբաճկոնակներ 2. Փրկաշրջաններ 3. Լաստեր փրկարար

Աղյուսակ 2

Դասակարգման ենթակա օբյեկտների ցանկը

ը/կ	Տեխնիկական կարգավորման օբյեկտները
1.	Կատեգորիա՝ փոքրաչափ նավեր
1.1.	Փոքրաչափ նավեր՝ 6 մետրից ավելի իրանի երկարությամբ
1.2.	Սերիական թողարկման փոքրաչափ նավեր՝ 6 մետրից ավելի իրանի երկարությամբ

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 9

«Փոքրաչափս նավերի անվտանգության
մասին» Մաքսային միության
տեխնիկական կանոնակարգի

**Փոքրաչափս նավերի եւ (կամ) սարքավորումների սերտիֆիկացում
անցկացնելու կարգը**

1. Փոքրաչափս նավերի եւ (կամ) սարքավորումների սերտիֆիկացումն իրականացվում է հետեւյալ սխեմաներով.

1ա սխեման սերիական թողարկման փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների համար ներառում է հետեւյալ գործողությունները.

հայտատուն ձեւավորում է 76-րդ կետի 8-րդ ենթակետում նշված փաստաթղթերի լրակազմը եւ սերտիֆիկացման հայտ ներկայացնում սերտիֆիկացման մարմին.

սերտիֆիկացման մարմինը փորձարկումների անցկացման համար հայտատուից անցկացնում է նմուշառում.

Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ներառված հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) (այսուհետ՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)) անցկացնում է փոքրաչափս նավերի եւ (կամ) սարքավորումների նմուշների փորձարկումներ.

սերտիֆիկացման մարմինն անցկացնում է արտադրողի արտադրության վիճակի եւ փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների նմուշների փորձարկումների արդյունքների վերլուծություն եւ դրական արդյունքների դեպքում հայտատուին տալիս է համապատասխանության

սերտիֆիկատ.

սերտիֆիկացման մարմինն անցկացնում է տեսչական հսկողություն՝ սերտիֆիկացված փոքրաչափ նավերի եւ (կամ) սարքավորումների նկատմամբ, հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) նմուշների փորձարկումների եւ (կամ) արտադրության վիճակի վերլուծության միջոցով:

3ս սխեման փոքրաչափ նավերի եւ (կամ) սարքավորումների խմբաքանակի (միավոր արտադրատեսակի) համար ներառում է հետեւյալ գործողությունները.

հայտատուն ձեւավորում է 79-րդ հոդվածի 8-րդ ենթակետում նշված փաստաթղթերի լրակազմը եւ սերտիֆիկացման հայտ ներկայացնում սերտիֆիկացման մարմին.

սերտիֆիկացման մարմինը կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) փորձարկումների անցկացման համար հայտատուից անցկացնում է նմուշառում.

հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) անցկացնում է փոքրաչափ նավերի եւ (կամ) սարքավորումների նմուշների փորձարկումներ.

սերտիֆիկացման մարմինն անցկացնում է փոքրաչափ նավերի եւ (կամ) սարքավորումների նմուշների փորձարկումների արդյունքների վերլուծություն եւ դրական արդյունքների դեպքում հայտատուին տալիս է համապատասխանության սերտիֆիկատ.

1ս սխեմայով սերտիֆիկացման դեպքում հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր կամ շինարար, կամ օտարերկրյա շինարարի հետ ունեցած պայմանագրի հիման վրա վերջինիս՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մատակարարվող արտադրանքի

համապատասխանության եւ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության դեպքում պատասխանատվության մասով գործառույթներն իրականացնող անձ (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ):

Յս սխեմայով սերտիֆիկացման դեպքում հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր կամ արտադրող, կամ վաճառող, կամ օտարերկրյա արտադրողի հետ ունեցած պայմանագրի հիման վրա վերջինիս՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մատակարարվող արտադրանքի համապատասխանության եւ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մատակարարվող արտադրանքի անհամապատասխանության դեպքում պատասխանատվության մասով գործառույթներն իրականացնող անձ (օտարերկրյա արտադրողի գործառույթներն իրականացնող անձ):

2. Հայտատուն կարող է սերտիֆիկացման հայտով դիմել «Փոքրաչափս նավերի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հաստատման ենթակա Փոքրաչափս նավերի եւ սարքավորումների ցանկում ընդգրկված՝ փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների հավատարմագրման ոլորտում սերտիֆիկացման ցանկացած մարմին, Մաքսային միության Հանձնաժողովի կողմից հաստատվող սերտիֆիկացման ձեռով:

Սերտիֆիկացում անցկացնելու հայտը ձեակերպվում է հայտատուի կողմից եւ պետք է պարունակի՝

հայտատուի անվանումը եւ գտնվելու վայրը.

շինարարի անվանումը եւ գտնվելու վայրը.

Տեղեկություններ՝ փոքրաչափ նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների (դրանց բաղադրության) վերաբերյալ, եւ դրանց նույնականացնող հատկանիշները (անվանումը, ծածկագիրը՝ ըստ Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության դասակարգչի, այն փաստաթուղթը, որի համաձայն պատրաստված են փոքրաչափ նավերը եւ (կամ) սարքավորումները (միջպետական կամ ազգային ստանդարտ, ձեռնարկության ստանդարտ, տեխնիկական պայմաններ եւ այլն)), թողարկման ձեւը՝ սերիական արտադրություն կամ խմբաքանակ, պայմանագրի վավերապայմանները եւ այլն)։

սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ օգտագործվող ստանդարտը (ստանդարտները)։

սերտիֆիկացման սխեման։

3. Սերտիֆիկացման մարմինը քննարկում է հայտը եւ ընդունում է որոշում՝ սերտիֆիկացում անցկացնելու հնարավորության վերաբերյալ։

Դրական որոշման դեպքում սերտիֆիկացման մարմինը սերտիֆիկացման աշխատանքների կատարման վերաբերյալ պայմանագիր է կնքում հայտատուի հետ։

Սերտիֆիկացման մարմինն աշխատանքները կատարում է սերտիֆիկացման սխեմայի համաձայն, պատրաստում է որոշումը եւ դրական արդյունքի դեպքում հայտատուին տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատը։

4. Սերտիֆիկացման բացասական արդյունքի դեպքում սերտիֆիկացման մարմինը հայտատուին է ուղարկում հիմնավորված որոշում՝ համապատասխանության սերտիֆիկատի տրամադրումը մերժելու վերաբերյալ։

5. Փոքրաչափ նավի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների տիպային նմուշի (տիպային նմուշների) փորձարկումներն անցկացվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից այն սերտիֆիկացման մարմնի հանձնարարությամբ, որին տրվում է փորձարկումների արձանագրությունը։

6. Արտադրության վիճակի վերլուծությունը սերտիֆիկացման մարմնի կողմից անցկացվում է շինարարի մոտ: Վերլուծության արդյունքները ձեւակերպվում են ակտով:

Եթե կառուցողն ունի փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների արտադրության կամ մշակման եւ արտադրության որակի կառավարման սերտիֆիկացված համակարգ, ապա սերտիֆիկացման մարմինը գնահատում է տվյալ համակարգի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող՝ սերտիֆիկացվող փոքրաչափս նավերի, փրկարար միջոցների եւ (կամ) սարքավորումների կայուն թողարկումն ապահովելու հնարավորությունը:

7. Սերտիֆիկացման սխեմայով նախատեսված ստուգումների դրական արդյունքների դեպքում սերտիֆիկացման մարմինը ձեւակերպում է համապատասխանության սերտիֆիկատը եւ այն հանձնում է հայտատուին:

Համապատասխանության սերտիֆիկատը ձեւակերպվում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված միասնական ձեւով:

Սերտիֆիկացման մարմինը տրված համապատասխանության սերտիֆիկատի վերաբերյալ տեղեկությունները փոխանցում է Միասնական ձեւով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստր:

8. Թողարկվող սերիական արտադրության փոքրաչափս նավերի եւ (կամ) սարքավորումների համար համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը սահմանվում է 5 տարուց ոչ ավելի, թողարկված խմբաքանակի համար ժամկետ չի սահմանվում:

9. Համապատասխանության սերտիֆիկատը կարող է ունենալ հավելված, որը ներառում է որոշակի արտադրատեսակների ցանկ, որոնց վրա տարածվում է դրա գործողությունը: Հավելվածը ձեւակերպվում է, եթե՝

պահանջվում է մանրամասնել դիմումատուի կողմից թողարկվող եւ միեւնույն

պահանջներով սերտիֆիկացված միատեսակ արտադրանքի խմբի կազմը.

պահանջվում է նշել արտադրող գործարանները, որոնք ներառված են ավելի խոշոր՝ արտադրանքի արտադրության միասնական պայմաններ ունեցող միավորումներում: